

Վ. ԹԵՐՁԻՒՄԱՅԱՆ


ԱՐԱՋԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

891.99.092

Խ. 99

Ա - 82 թ





-6 NOV 2011

391.99-092 գ. ԹԵՐՅԱՆԱՀՅՈՒՆ
W-827

Արագի

ԱՐԱԳԻ



ԱՐԱԳԻ

ՀԱՅՊԵՏԱՐԱԾ

1 9 4 0



ՀԵՐԵՎԱՆ

18.04.2013

66.783

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



1638
40

Վ. ՏԵՐՅԻԲԱՇՅԱՆ
ԱՐԱՅԻ

Ին ԱՐՄ. ՀԽՍՀ, Երևան, 1940 թ.

Խորհրդային արձակագրության ավագ ներկայացուցիչ Արագին, իր գրական զործունելությունը սկսել է գեռես հեղափոխությունից առաջ: Նրա առաջին գրական յերկը տպագրվել է 1906 թ. «Մուրճ» ամսագրում: Այդ պատմվածքը («Դոն Կարապետի արշավանքը զեղի Կղերաստան» Ֆերնանդո ստորագրությամբ) բնորոշ է այն տեսակետից, վոր յերիտասարդ հեղինակը կարողանում է ճիշտ կերպով բնութագրել դաշնակցության սոցիալական եյությունը, մերկացնել նրա գեմքը, վորպես բուրժուազիայի և կղերականության հետ սերտորեն շաղկապված կուսակցություն: Ուշագրավ է և այն, վոր Արագին այս սատիրական գրվածքում ցույց է տալիս իր գրական կուլտուրան: Իրեն նմուշ վերցնելով Սերվանտեսի հանճարեղ յերկի, Վոլտերի Փիլիպովայական պատմվածքների յումորիստական-յերգիծական ձևը, Արագին ցայտուն գծերով նկարում է դաշնակցության ներկայացուցիչ Դոն Կարապետին, վորի բոլոր հոխորտանքները վերջանում են կղերապետի, այսինքն կաթուղիկոսի աջը համբուրելով:

Արագու այս դրական առաջին յելույթը նշանակալից և նաև այն իմաստով, վոր հեղինակը վորոշում ե իր տեղը գրականության մեջ, նա հենց սկզբից սահմանագծում ե բուրժուական նացիոնալիստական բանակից և հակադրվում ե նրան. Գրական այս կողմնորոշումը պատճական չեր, դա պայմանավորված եր յերիտասարդ հեղինակի անցած ուղիով և աշխարհայացքով: Դյուլացիական ընտանիքի զավակ Մոլսես Հարությունյանը (ծնված Շուլավերում 1878 թ.) մանուկ հասակից զգացել եր տիրող կարգերի ճնշումը, չքավոր գյուղացիության անլուր հարստանարությունը և կեղեքումը: Մինչև 12 տարեկան հասակը Սրազին ապրել ե գյուղում, վորտեղ և ստացել ե իր նախնական կրթությունը, միաժամանակ մասնակցելով գյուղատնտեսական աշխատանքներին: Ժողովրդական կյանքին անմիջականորեն մոտիկ լինելը խորապես տպավորվում ե փոքրիկ Մոլսեսի մեջ, գյուղի ցավերն ու կարիքները նազգացել ե վաղ, և զա գրել ե իր դրոշմը նրա գրական դործունեյության բնույթի վրա: Արագու գրվածքների մեջ նշանակելի տեղ ե գրափում գյուղը:

90-ական թվերի սկզբին Արագուն հաջողվում ե շարունակել իր ուսումը Թբիլիսիի ուսուական ուսական դպրոցում: Այստեղ նրա դասընկերն եր Ստ. Շահումյանը, վորի հետ Արագին մտերմանում ե աշակերտական տարիներում: Իննունական թվերի վերջուն Թբիլիսիի աշակերտների մեջ սկսվում ե գդալի հետաքրքրություն զետի հառարակական հարցերը. աշակերտական այդ շարժումը, վորի գլխավորողներից մեկն եր Ստ. Շահումյանը, ճիշտ ե՝ կրում եր փոքր

ինչ անորոշ, մշուշային բնույթ, սակայն պարունակում եր իր մեջ հեղափոխական սազմեր. դա նախապատրաստական շրջան եր այն աշակերտների համար, վորոնք հետազոտմ իրենց ուսանողական տարիներին սկսեցին հազորդակից լինել իսկական հեղափոխական շարժման և ստացան կրակի մկրտություն պայքարելով կենինի—Ստալինի կուսակցության շարքերում:

Աշարտելով ուսական դպրոցը Արագին մեկնում ե Պետերբուրգ (այժմ Լենինգրադ) և ընդունվում ե տեխնոլոգիական ինստիտուտը: Այստեղ արդեն նրա աշակերտական անորոշ ձգտումները սկսում են ավելի հստակ ձևեր ստանալ. ուսանող Արագին վորպես հեղափոխական ցարիզմի ժամանակ ձերբակալվում ե յերկու անգամ՝ 1901 և 1903 թվերին Պետերբուրգում: Բանտարկությունը ևս զգալի դեր է խաղում նրա աշխարհայացքի ձևավորման գործում: Նրա մեջ ել ավելի յե կոփիում հավատը զետի բանվոր դասակարգի ուժերը և նրա վերջնական հաղթանակը: Արագին իր մի շարք պատմվածքներում նկարագրել ե ընդհատակյա հեղափոխական աշխատանքը: Այդ պատմվածքները նազգեց ավելի ուշ, հեղափոխության հաղթանակից հետո, վերհեշելով մոռայլ անցյալը և համեմատելով այն ներկա պայման իրականության հետ:

Իր առաջին պատմվածքից հետո Արագին հետագայում սկսում ե աշխատակցել բանվորական մամուլին, վորի որդանները շատ կարճատև կյանք ելին ունենում ուժեղացող ցարական ուսակցիայի ճնշումների հետեւանքով: Ազպարեզը պատկանում եր միայն բուրժուական, ազգայնական գրականության ներկայացուցիչներին:

1914թ. իմպերիալիստական պատերազմը եւ ավելի ուժեղացրեց նացիոնալիստական տրամադրությունները, «խոտայավ ազգայնական մթնոլորտը», ինչպես գրում եւ ինքը՝ Արագին: Հեղափոխական պրոլետարիատի դատին նվիրված գրողները մեծ դըմվարությամբ եյին կարողանում լույս ընծայել իրենց գրվածքները: Բուրժուական հրատարակչությունները մերժում եյին հրատարակել պրոլետարական գրողների յերկերը: 1915թվին պրոլետարական բանաստեղծ, հանգույցյալ ժողովրդական պոետ Հակոբ Հակոբյանի հետ միասին Արագին խմբագրել եւ Կարմիր մեխակներ» և «Բանվորի ալբոմ» ժողովածուները, վորոնք հանդիսանում եյին պրոլետարական գեղարվեստական գրականության առաջին որդանները հայ իրականության մեջ:

Միմիայն սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Արագին հնարավորություն ունեցավ բառի բուն իմաստով «գրականությամբ զբաղվելու լայն թափով» ինչպես ասում եւ ինքը՝ հեղինակը: Հոկտեմբերյան հեղափոխությունը հնարավորություն տվեց Արագուն ամբողջովին նվիրվելու իր կոչմանը, նա սկսեց աշխատել կրկնապատկված յեռանդով, կարծես ցանկանալով հետ բերել կորցրած ժամանակը:

* * *

Դեռևս հեղափոխությունից առաջ Արագին գտնել իր գրական կողմանորոշումը, նա անցել եր հեղափոխության կողմը: Նույնիսկ ուսակցիայի տարիներում, հեղափոխության ժամանակավոր պարտության ըրջանում նա չի վարակվել հուսալքումով և պեսի-

միզմով, հաստատ հավատալով պրոլետարիատի ապագա հաղթանակին, զիտակցելով, վոր այդ հաղթանակը միայն կարող եւ հաստատել բոլոր ազգությունների աշխատավոր մասսաների համերաշխությունը և համագործակցությունը սոցիալիստական հասարակաբարձում:

Հենց իր առաջին ովատմվածքներում նա պարզորոշ կերպով դրանորում եւ իր գիրքավորումը, կանգնում և շահագործվողների և ճնշվածների կողմը, արհամարհելով գրական եժան փառքը, վոր կարելի յերձեռք բերել շոյելով քաղքենու ճաշակը, բավարարելով բուրժուական գրական շուկայի պահանջները: Արագուն կղզնական այդ փոքրիկ մինյատուր-պատմվածքներում, վորոնք հիշեցնում են հաճախ արձակ բանաստեղծություններ, մենք տեսնում ենք արդեն հասունացած զրոյի հատկություններով ոժաված մի հեղինակի, վորը վերին աստիճանի խոսապահանջ և զեպի իր նյութը, չունի գրական առաջարեց նոր մըտնողներին հատուկ յերկարաբանությունները, շեղումներ, ճապաղ գարձագածքներ, այլ աչքի յեւ ընկնում իր լեզվի և պատկերավորումների պարզությամբ, հստակությամբ: Նա կտրողանում է տեսնել եյականը, հատկանշականը յերեւոյթների մեջ վորպես մի շըտըիս, ընդհանրացնել այդ շարիխը և վերածել գեղարվեստական ընդգրկող հուզիչ պատկերների: Յեվ այդ նա անում և ամենադժվար ժանրերից մեկի՝ կարճ պատմվածք-նովելլի մեջ՝ հաճախ 2-3 եջանոց:

Արագուն նախահեղափոխական շրջանի կարճ նովելլներում մենք տեսնում ենք ձեի և բովանդակության ներդաշնակություն: Կարելի յեւ առեւ վոր Ա-

բազին հենց սկզբեց մշակել եր ու ըույն ձևը, կարճ, նույնիսկ շատ կամ պատմվածքը, վորի մ.ջ թեման զարգանում ե վոչ թի նատուրալիստական պատկ բացաման, այլ լիրիկական-հուզական (եմոցիոնալ) ներթափանցման միջոցով։ Այս կամ պատմվածքներում հեղինակը նպատակ չի ունեցել տալ մարդկանց կյանքի լայն կտավ այդ հնավավոր ել չե անել այդքան նեղ սահմաններ ունեցող դրական մի ժամկում, սակայն դրա փոխար ն նրանց մեջ տրված ե սոցիալական կյանքի յերկույթների խարակտերիզացիան, վորը պարզում ե մող համ, ը մարդկանց իրական հարաբերությունները, նրա ց սոցիալական հարաբերությունները։ Վերցրեք այն փ քր պատմվածքները, վորոնք գրված են նախապատերազմյան շրջանում։ Դրանց մեջ մենք տ սանում ենք բուրժուական հասարակության խոր հակառությունների պատերացումը գեղարվեստական խացած ե ընդհանրացված ձևով։

«Երես» պատմվածքում մենք խորապես դգում ենք սոցիալական կյանքի այդ հակասություններից մեկը, յերբ բուրժուական մեծ քաղաքի խոնավ նկուղի մեջ մեռնում ե արևի շողից զրկված աղջկելը, իսկ հուսահատ հայրը գունդատվում ե հզոր արևից, վորը խնայել ե իր մի հատ շողը և սպանել նրա փոքրիկ լուսիկին։

«Երես տիսրեց ու մթնեց»։

«Գնա, ասաց, հայտնիր աշխարհին, վոր վերեի հարկը արեի շողքերը խլեց ստվեր զցեց ներքեի հարկին և սպանեց են վոռկեհեր աղջկան»։

Արևի համար ըստ յերկույթին անսովոր այս պատասխանը ընթերցողը ընդունում է շատ բնական»։

կերպով, գտնելով այնտեղ պատմվածքի անխուսափելի յեղակացությունը, նրա սոցիալաւան իմաստը։ «Հեղինակթ» պատմվածքում տրված ե սոցիալական կյանքի մի առ հակասությունը բուրժուական հասարակության մեջ։ Այստեղ մենք տեսնում ենք ձնշված, կեղեքված գյուղայիսկան մասնաների մուայլ կամքը, վորը չ.ւնի հույսի և լույսի վոչ մի նշույլ։ Մարդիկ այնտեղ իրենց միխթարությունը վորոնում են հեքիաթին աշխարհում, վ.ը.տեղ «յոթը սարերի յետեռում հրեղեն թուչուն ե ապրում իր վոսկե վանդակում», վորտեղ դաշտում ձածկվում են մշտադաշը կանաչով և մայիսյան ծաղիկներով ջինջ, պայծառ յերկնքի տակի։ Սակայն զաժան կյանքը, անողոք իրականությունը գալիս ե և կոպիտ կերպով ընդհատում հեքիաթը։

Դյուղացի չքաղող Մարգարը ձմռան յերեկոները հավաքում եր իր շուրջը գյուղի յերեխաներին և պատմում նրանց հրաշալի հեղինաթներ։ «Յով Մարգարն սկսում եր կարծես յերազելով, աչքերը փակ, կուր աշուղի նման, ո սում եր պատմել իր սիրած են մեծ հեղինաթը հրեղեն թուչունի և յերեք յեղբայրների մասսին... Յոթը սարերի յետեռում հրեղեն թուչունն ե ապրում իր վոսկե վանդակում։ Ու նրա շուրջը հաստամբակուռ պատեր են քոշած ու յերկաթե մեծ դըռն ների մոտ սկ, զաժան վեշապները հնկում են գիշեր և ցերեկ...»

«Հրեղեն թուչունը»—հանդիսանում ե այն յերշանկությունը, վոր խլել են ժողովրդից դաժան վիշտապները, շահագործողները և ձնշողները։ Ժողովուրդը զերազերել յերշապել ե յերշանկության մասին և նրա զարդրուկ յերազել ե յերշանկության մասին և նրա

շուրջը հորինել հրաշապան հեքիաթներ։ Եեկ ահա յերեք յեղբայրները մեկ մեկու յետևից գնում են այդ հրեղեն թռչունը փնտռելու, բայց միայն փոքր յեղբայրն և տիրապետում նրան, «հաղթելով աժդահա վիշտապներին...»

Սակայն դավաճան յեղբայրները խաբում են նրան և խլում նրանից հրեղեն թռչունը... Հեքիաթի ամենահետաքրքրական տեղը հանկարծ դրսից կանչում են Մարգարինն., Դաժան աղան և կանչում, պետք և հնազանդվել նրա կամքին, յենթարկվել նրա քմահաճույքներին։

«Մարգարը կարծես քնից արթնացած ականջ դրեց, ապա վոտները ձգելով տրեխների մեջ ու գլխին գնելով փափախը զուրս յեկավ փողոց։ Դուռը բաց մնաց և դրսից մի անախորժ սառնություն ներս յեկավ...»

«Զքացան մեր յերեակայությունից մայիսյան դաշտերը, ծաղիկները։ Մեզ կծկում եր ձմռան ցուրտը, իսկ մութ անկյուններից չարագուշակ փըստիքը դաժան աղայի անունն եր տալիս, վոր կտրեց վառ հեքիաթը։

Սա նախահեղափոխական գյուղի քայլայման և թշվառայման ցնցող պատկերն եւ Մենք տեսնում ենք, թե ինչպես հարուստ աղան, գյուղի կուլակը ծծում և չքափոր գյուղացու կյանքի ամենավերջին հյութը, դաժան շահագործման միջոցով քայլայում և նրա տնտեսությունը, սովոր մատնում նրա ընտանիքը։ Հեքիաթի օգակաճան յեղբայրները խաբում են իրենց փոքր յեղբորը, իջեցնում են նրան հորի մեջ, ապա

առնելով նրա վաստակած հրեղեն թռչունը, թողնում են գնումնում...»

Ըստ յերեւոյթին այնքան պարզ մի պատմվածքի ոյուժեն Արագին հագեցնում և ներքին խոր իմաստով, «Հեքիաթը» դասում և մի սիմվոլ։ Հըեղեն թռչունի հեքիաթի յեղբորդ յեղբայրը, շահագործված և ճնշված աշխատավոր ժողովուրդը, վորի մարմնացումն և Մարգարը, փակված և մութ հորում, սակայն նա փորձում և աղատվել այդտեղից, թոթափել իր ուսերից շահագործողների և ճնշողների լուծը։

Պատմվածքի վերջում հեղինակը շարունակում է ընդհատված հեքիաթը. «Ճատ հեռվից, ուր ապատ հոգին են ապրում, յոթը սարի հետեւից թռչելով գագիրն առ ապրում, իր սլանում և ամպերից վեց և չորրորդ յեղբայրը, նա սլանում և ամպերից վեր իր կարմիր նժողովով, գալիս և աղատելու Մարգարին իր խալար բանտից»։ Սա միլիոնավոր մասսաներին հատկանալի մի սիմվոլ եւ հագեցած հեղափոխական բովանդակությամբ։ Յարական ցենզուրայի պայմաններում Արագին վարպետորեն ոգտագործում և այդ հնարքը պատկերելու համար «չորրորդը յեղբոր», —պրոլետարիատի գերը աշխատավոր ճնշված մասսաների աղատաղրման գործում։

Արագին կարողանում և հեղափոխության իդեան խտացնել գեղարվեստական պատկերների մեջ, նախացնել գիմում և ուժմվուների, վորպեսզի կարուղացարվեստական միջոցների առավելագույն տնտեսման միջոցով արտահայտել իր միտքը, գրական այդ հնարքն ոգնում և նաև խուսափելու ցարական ցենզուրայից, վորը այդ «յեղոպայան լեզվի» տակ անկարող եր գուշակելու գրվածքի իսկական գաղանակարը, իջեցնում են նրան հորի մեջ, ապա

փարական բովանդակությունը։ Սիմվոլն այդպիսով Արագու մոտ լցվում ե հեղափոխական բովանդակությամբ։ դա դառնում է մի այլաբանություն, նման այն ալեգորիաների, վորոնց միջոցով պրոլետարական մեծ զրոյ Մ. Գորկին արտահայտում ե իր հեղափոխական գաղափարները («Մըրկահավը», «Բազեյի յերգը» և այլն)։ Այդ ալեգորիաները պարզ և մատչելի յեն միշտներին։

Արագին անկասկած կրել ե Մ. Գորկու գրական այդ ուղղության (հեղափոխական ոռմանտիզմի) վորոշ աղղեցությունը։ Այդ ևս ավելի դրսեորվեց հեղափոխության առաջին տարիներին Արագու մի շարք արձակ բանաստեղծություններում։ Սակայն հեղափոխությունից առաջ Արագին ալեգորիայի ձեւ ոգտագործում ե ռեալիստական պատմվածքի հյուսվածքի մեջ։ Այդպիսի ալեգորիկ (այլաբանական) պատմածք ե նաև 1913 թ. գրված «Կիսատ տունը», վորը ինչպես «Նեքիաթը», «Վերջին տերելը» և այլն խտացնում ե իր մեջ վորոշակի գաղափարական բովանդակություն։ Այդ պատմվածքում Արագին նուրբ ակնարկներով խոսում ե գալիք հեղափոխության մասին։ Նա վերցնում ե մի պատկեր 1905 թվի հեղափոխության ըրջանից։ Դա այն շրջանն է, յերբ «Մութ խորչերից ձայնեց դարավոր բողոքը, յերբ բացվեցին փակ բերանները...» Այդ որերին գյուղացի Սարգիսը վերագունում ե քաղաքից և հայտարարում։ «Ել հարուստաղքատ չկա, սրանից զենք բոլորս մին ենք»։ Յեզ Սարգիսն ուրախ սրտով սկսում ե իր նոր տան շենքը։

Նա բարձրացնում ե պատերը, բայց չի կարող անում ծածկել տանիքը։ Տունը մնում ե կիսատ-

հեղափոխությունը պարտվում ե, գյուղի կյանքը նորից մտնում ե իր նախկին հունի մեջ։ Յերկու վաշը խառուները՝ հաստափոր Սանդրոն և նիհար, չորացոծ Մարտիրոսը դարձյալ գրավում են իրենց առաջվագիրքերը։ Նրանք ծաղրում են Սարգիսն, վոր սաշարողացավ ավարտի իր կիսատ տունը։ Կուլակ Սանդրոն ասում ե Սարգիս, բա ասում ելիր ել հարուստաղքատ չկա։ բա ինչի չես տունդ շինում։ ախր կիսատ անացելու։ Սարգիսը պատասխանում ե նրան։ «Եատ մի յեղակալիլ, մի առվով վոր ջուր ագնացել, մին ել կդա։ սաղ աշխարհի տունն ա կիսատ մնացել, մենակ իմը հո չի։ Լա ի իմանած են որը ելի կդա, տունս կշինեմ, քու աչքն ել կհանեմ...»։ Այսպիսի պատմությունը դառնում ե մի սիմվոլ չափարագած հեղափոխության, վորը պետք ե հաղթանակի մի որ։ Արագու հերոսները տոգորված են այդ գաղափարով, նրանք զգում են, վոր այդպես չի կարող շարունակվել միշտ։

Սարգիս իմեղդվում են «Վանդակներում», այն մեծ բանտում, վոր կոչվում եր ցարական Ռուսաստան։ Տանձվում են վոչ միայն բանվորներն ու չքափոր գյուղացիները, այլ և մանր բուրժուական խավերը, տնտեսակից անապահով ինտելիգենտները, ստորին պաշտոնյան երը, ծառայողները, Դրանց ներկայացուցիչն ե Մելանյանը, հեռազրատան հասարակ ծառառող («Վանդակներում» 1913 թ.)։ Կյանքը սեղմել ե, նրան իր ճիրաններում, դարձրել մարդումեքենա աննապատակ և անհեռանկար։ Նա չի կարողանում վճռել «զլիավոր հարցը», — մեմ համար ե այս կյանքը։ վոր յեւ քարշ եմ տալիս, ասում ե նաև, — լինձ համար

ըաղմող աշխատավորներին, վորոնց սազմադաշտ են քշել կապիտալիստները վոսկի հորթին զոհելու համար։ Դա այն ժամանակն եր, յերբ գրողներից շատ քչերն եյին հանդինում իրենց ձայնը բարձրացնել այդ մասսայական բնաջնջման, այդ ահավոր սպանդի դեմ։ Արագին իր «կարմիր համբուլյոր» պատմվածքով (1915 թ.) հանդեռ եւ դալիս վորպես հեղափոխական ինտերնացիոնալիզմի գաղափարի պաշտպան։ Նա հավատում է, վոր պատերազմի դաշտում ընկածները «փոտքի կելնեն և կը այլն դեպի քաղաքաները քարահատակ... շոյնդ ու շրիկոցով կրանան փակ գուներն ու ներս կտանեն ցրտահար, արյունոտ իրենց ճշմարտությունը»։ Դեռևս այն ժամանակ, յերբ գրողներից շատերը վարակված ելին շովինիդմի թույնով և իրենց գրածքներում պաշտպան եյին կանգնում բուրժուական «հայրենիքին», Արագին քարոզում և պատերազմող իմպերիալիստական յերկրների աշխատավորների յեղբայրացոմը, պայքարելով հանուն պրոլետարիատի հաղթանակի։

II.

Հաղթանակում է սոցիալիստական մեծ հեղափոխությունը։ Սկսվում է և Արագու ստեղծագործության ավելի բեղուն և հետաքրքրական շրջանը։ Հեղափոխությունից առաջ Արագին գրել եւ անհամեմատ ավելի քիչ։ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը և Անդրկովկասի խորհրդայնացումը արձակում են Արագու ստեղծագործական հնարավորությունները

կաշկանդող կապանքները։ Դեռ ավելին, Վըրաստանի խորհրդայնացումը նրան աղատում եւ մենշևիկյան բանտից։ Արագին վողջունում եւ խորհուրդների հաղթանակը։ Նա զրում է իր խանդավառ արձակ բանաստեղծությունները նվիրված Փարիզի կոմունային, սկսում է իր առորյա զրական աշխատանքը և մասնակցությունը խորհրդային գրական կյանքին։

Համեմատաբար կարճ ժամանակաշրջանում Արագին հրատարակում եւ իր պատմվածքների չորս ժողովածուները, այնուհետև անցնում եւ ավելի մեծ ծավալի գրվածքներ ստեղծելու գործին («Էլուսնի շոյներով», «Զրութի ցոլըում»)։

1937 թվին լույս տեսավ Արագու յերկերի ժողովածուի առաջին հատորը, վորի մեջ ամփոփված են հեղինակի մի շարք ուշագրավ յերկերը։ Միաժամանակ Արագին հանդեռ եւ դալիս վորպես մանկական գրող, 1923 թվից սկսած մինչև այսօր։ Հայտնի յեն նրա մի շարք պատմվածքները, վորոնք տալագրված են մանկական հանդեսներում կամ առանձին գրքույկներով։ Ինչպես «Փոքրիկ շինարարներ», «Պիոներ Սարոն», «Հերոս Կարենը», «Անբախտ վորոկաններ» և այլն։

Արագու ստեղծագործական մեթոդի և լեզվի պարզությունն արդեն նրա պատմվածքների մեծ մասը մատչելի յեն զարձնում մանուկ և պատանի ընթերցողներին, Արագին աշակերտներից ամենասիրված գրողներից մեկն եւ նրա այժմեական թեմատիկան, անսեթենթ ուարդ ձեր գրավում եւ ամեն տարիքի ընթերցողի։ Անկասկած Արագու վորոշ գրքածքների մեջ գեռաւ կան չհաղթահարված վերացա-

բայց յես ահա վոչ թե ապրում եմ, այլ մեռնում
որեցոր. կնոջս, յերեխաների՞ս համար, բայց նրանք
ել իւձ նման են՝ նույն դալուկ գեմքերը, փշրված
սրտերը:

Սակայն Մելանյանը տեսնում է, վոր կան յեր-
ջանիկներ, վորոնց համար ե այս կյանքը, ահա նը-
րանք «հարուստ, ջահել ու անհոգ, դալիս հն հեռա-
գրատուն ծիծաղելով, կչկչալով, մեկ-մեկու ձեռ-
քից իւլում են զրիչը... չուտ-շուտ հեռագիրներ են
տալիս, այն ել ինչ զվարճալի ու չնչին բաների մա-
սին. — Շնորհաւագործմ ենք քո անվանակոյությունը:
Մենք առողջ ենք. Առողջ ե և մեր չարաձճի շնիկը».
Հեռադրատան «Վանդակների» յետեւմ խեղդվող Մե-
լանյանը յերազում ե հարստության մասին. Սակայն
դա մի ցնորք ե, վոր յերեք չի կարող իրագործվել:
Հարստանալու համար պետք ե ստրկացնել հազարա-
վոր մարդկանց, «իսանդարել նրանց ապրելու». Այս
գիտակցությունը մեխվում ե Մելանյանի ուղեղում:
Նա չի կարող ստրկացնել իր նմաններին, արհամար-
հել նրանց, վորոնք ձեռները բարձրացրած՝ սպառ-
նագին դոչում են. — «Դուք, դուք, խանդարում ես մեր
ապրելուն»:

Եեվ ահա կայծակի նման մի լույս փայլատա-
կում ե նրա հոգում: — «Յես ձեզ հետ եմ, հանկարծ
դոչում ե նա, յես ել ձեզ հետ եմ — գնանք բոլորս
միասին»:

Նոր տարի յե: Մելանյանը նստած ե մեքենայի
առաջ, վանդակների յետեւմ, հեռադրեր ե ուղար-
կում աշխարհի չորս կողմը՝ թթվում եր թե դրսի
ամբողջ աղմուկը նրան եյին հանձնել. վոր դեկա-

վարի: Այդ ժխորում նրա վառ յերեակալության մեջ
լսվում եյին բյուրավոր ամբոխի ձայներ: Նա չըխ-
չըխկացնում եր՝ շնորհամփոր, շնորհամփոր, շնորհամփոր,
ու թվում եր, թե մի ուրիշ մեծ տոն ե յերկրի վրա,
թե հսկա զանգեր են զողանջում ովկյանից ովկյան
ու ինքը կանգնած բարձր, բարձր մի աշտարակի վրա,
դոչում ե բյուրավոր ամբոխին:

— Ուղղեցնք կորացած մեջքերը, ծաղկեցրեք թա-
ռամած կանաչները: Զկան այլևս վանդակները, դուք
ազատ եք, ազատ...» («Վանդակներում»):

Ցարական բռնակալության և ուսակցիայի ուժե-
ղացման տարիներում Արագին գտնում ե իր մեջ
բավականաշափ ուժ այդ բռնությունը խորտակելու
կոչ անելու համար, իմակերխալիստական պատերազմի
նախորյակին ել ավելի ուժեղացող նացիոնալիստա-
կան մօլուցքը չի դիպչում Արագու ստեղծագործու-
թյանը. նա իր գրական բախտն արդեն վերջնակա-
նապես շաղկապել եր բանվոր դասակարգի և չըավոր
գյուղացիության ազատազրման գործի հետ: Նա անհամ-
բեր սպասում եր այն որվան, յերբ «կուղզին կորա-
ցած մեջերը», յերբ չեն լինի այլևս «վանդակներ»,
և յերբ «հաղթական կամարների տակով մենք կանց-
նենք նոր կյանքի շաբքերով...» («Կարմիր համ-
բույր»):

Իմակերխալիստական պատերազմի տարիներին
գր ված պատմվածքները հանդիսանում են մեր գրա-
կանության հակապատերազմական լավագույն եջերից,
տողորված հեղափոխական պաֆոսով և դեպի ապա-
գան ունեցած հավատով: Արագին յեղբայրության կոչ
ե անում թշնամի բանակներում իրար զեմ պատե-

կանության տարրեր, սակայն դրանք չեն խախտում
նրանց ընդհանուր գեղարվեստականությունը։ Արա-
գու կարճ պատմվածքների ուշազբավ առանձնահատ-
կություններից մեկն այն ե, վոր դրանք տոգորված
են ներքին, որգանական խոր լիրիզմով։

Նախահեղափոխական շրջանում այդ լիրիզմը
յերբեմն կրում եր թախծոտ, մինոր շեշտեր, Ռեակ-
ցիայի, հասարակական արամադրությունների անկ-
ման շրջանը շատերին յևնթարկում եր հուսալքման
և հոռեսեսության։ Սակայն Արագին չի ընկել վհա-
տության մեջ, նրա կարճ պատմվածքների լիրիզմը—
դա հեղինակի ստեղծագործության հատկանիշներից
մեկն ե։ Հեղափոխությունը նոր շեշտեր և նոր հնա-
չյուններ և տալիս Արագու ստեղծագործությանը։
Կյանքում կատարված վիթխարի տեղաշարժը, սոցիա-
լական և մարդկային նոր հարաբերությունների
ստեղծվելը, անցյալի և ներկայի հակադրությունը—
այդ բոլորը գրողի համար հանդիսանում են ստեղծա-
գործության անսպառ աղբյուր։

Արագու ուշադրությունը գրավում են նոր
կյանքի ցայտուն յերկույթները։ Ակզենական շրջա-
նում Արագին շարունակում ե զբել իր կարճ պատ-
մվածքների ձևով, վորոնց մեջ պատկերում ե այդ
յերկույթները։ Զափազանց ուշադրավ են այդ բնույթի
մի քանի պատմվածքները։ «Անցյալի նիրհնը», «Հին
ժամացույց» (1922) և այլն, դրանք ավելի շուտ լի-
րիկական պատկերներ են, մի տեսակ արձակ բանա-
տեղծություններ, վորոնց մեջ Արագին նուրբ կերպով
պատկերում ե անցյալի մահացման պրոցեսը, «հին

մարդկանց», շահագործող դառակարգերի վերջին ներ-
կայացուցիչների անհետացումը։

Մի շարք այլ պատմվածքներում Արագին պատ-
կերում ե վոչ միայն այդ մահացումը, այլ և անց-
յալի մասցորդների պաստիվ կամ ակտիվ գիմադրու-
թյունը, և այդ գիմադրության ջախջախումը։ Այս
տեսակետից հետաքրքրական են «Զառափաթ», «Տե-
սիւ», «Պատվավոր քաղաքացին» և այլ պատմվածք-
ները։ Այստեղ արդեն պետք ե նշել հետաքրքրական
մի յերկույթ։ Այս պատմվածքները կրում են յերբեմն
յումորիստական, սատիրական բնույթը և հիշեցնուքը
են Արագու առաջին պատմվածքը, վորի մեջ արտա-
հայտված սատիրական-յումորիստական հակումը
նորից հանգես և զալիս հեղինակի ստեղծագործական
մեթոդի մեջ։ Դա անկասկած հեղափոխության աղդե-
ցության հետեւանքն եր։

Յումորը Արագու համար ծառայում է վորպես
զենք մերկացնելու կապիտալիզմի մեացորդների հո-
գերանությունը, քաղքենիական վոչնչությունը, գա-
սակարգային խորթ տրամադրությունները։ Դիտելով
անցյալի խորթ մասցորդների մահացումը և նրանց
գիմադրությունը նոր կյանքին, Արագին կարողանում
է զբավորել այդ յերեվույթի սոցիալական արձատ-
ները։ Վորքան չնշին և վողորմելի յին թվում այդ
«նախկին մարդիկ» այն հոյակապ իրականության
հանգեպ, վոր ստեղծել և հեղափոխությունը, Պատ-
մվածքների այդ շարքում առանձնապես ուշագրավ
և «Զառափաթը»։ Արագին յումորիստական նուրբ
շտրիխներով մերկացնում ե կապիտալիստների
ոպառարկու՝ հին ինժեներ Սելիք-Ղահրամանյանի

տիպը, վորը Արագին զծում եւ վարպետությամբ, Դա
այն մարդն եր, վոր հեղափոխությունից առաջ իր
տիրոջը՝ կապիտալիստին ասում եր. «Սաղ ուսքոչունց
կըկոտորեմ, թաք քեզ նավթ տամա, իսկ այժմ փոր-
ձում եւ հարմարվել նոր կարգերին. սակայն դաստ
բանվորները լավ են ճանաշում հին գայլին. «Եդ վոր
կարմիր գալստուկ ես կապել, մթամ գիտում չենք,
տակին ինչ կա—ասում են նրան, Յել «աղա» ինֆե-
ներին նստեցնելով Շտաչկի» վրա դուրս են բերում
նավթահանքերից:

Սակայն նոր կյանքի հիմնական մոմենտն այն
վիթխարի սոցիալական տեղաշարքն ե, վորը մասսա-
ներին բարձրացնում եւ քաղաքական ինքնագիտակ-
ցության մակարդակին. Յերեկվա ճնշված, կեղեքված:
ճխլոված բանվորն ու դյուզացին դառնում են նոր
կյանքի կառուցման հիմնական ուժը: «Ընկեր Մու-
կուչները» «Աչքը վախեցած Հանևները»—ահա այն
նոր մարդիկ, վորոնք բարձրանում են ցածից, ստա-
նում են մարդկային իրավունքներ, առաջին անգամը
պատմության մեջ գիտակցում են իրենց վորպես ի-
րավազոր մարդ և քաղաքացի:

Կարելի յե ասել, վոր մեր գրականության մեջ
վոչ վոք ափելի ցայտուն կերպով չի տվել այդ պրո-
ցեսը, քան Արագին: Նրա «Ընկեր Մուկուչը» և «Աչ-
քը վախեցած Հանևը» այս տեսակետից կարելի յե
համարել բնորոշ որինակներ: «Ընկեր Մուկուչ»
պատմվածքը Արագին գրել ե 1924 թ. Անդրկովկասի
խորհրդայնացման առաջին տարիներում:

Ո՞վ ե Մուկուչը: Դա մի անգրագետ, գրիթե
անխոս կիսադյուզացի յե, կարված հողից: Նա ծառա-

յում ե քաղաքում վորպես կաշեդործարանի պահակ: «Ամեն ինչ վոխվում եր, բացի Մուկուչից» Նրա վրա վոչ վոք ուշադրություն չի դարձնում, նա
գործարանի անշունչ մասերից մեկն ե կարծես: Սա-
կայն մոտիկից նայողը կարող եր տեսնել նրա «խո-
շոք աչքերի մեջ քարացած հոգսի ու թախիծի արտա-
հայտությունը»: Կոտջ և չորս յերեխաների ծանր հոգ-
ությն ե ճնշում նրան: Նրա ամբողջ մտահոգությունն
ե՝ «հաց, հաց», սովահար ընտանիքի հրամայական
պահանջը: Նա շարունակ յերազում ե հացի մասին:

Յերբ պետական կարգերը փոխվում ենին, նա
որպական մի քանի անգամ հարցնում եր սրան-նրան:

— «Իրուստ մի, ասում են հացը պետք ա եփա-
նացնեն»:

«Յերբ խորհրդային իշխանության որով Մու-
կուչին գործարանի հացը բերող նշանակեցին, ուրա-
խությունից նրա լուսկաց լեզուն բացվեց, հենց իմա-
նաս հացի բոլոր բաժիններն ինքը պիտի վերցներ-
ել մարդ չմնաց, վորին չասեր,—բանվորի հացը յեռ
պիտի բերեմ»:

Հակառակ իր նոր պաշտոնին՝ Մուկուչը մնում
եր նույնը: Նա գեռս չի կարողանում ըմբռնել նոր
կարգերի իմաստը: Արագին ցայտուն գծերով տալիս
ե Մուկուչի հոգեբանության մեջ աստիճանաբար ա-
ռաջ յեկող փոփոխությունը, Նա տեսնում ե, վոր
«Բարձրինը ցած ե ընկել, ցածրինը բարձրացել»,
Սակայն ինչու ինքը մնացել ե նույն Մուկուչը,
ինչու իրեն «հանկեր» չեն կանչում, ինչու գործա-
րանի սափրիչը միշտ Մուկուչին «ցանում ա», յերբ
նա գնում ե սափրվելու «Մինը հրեն «նախագա» յա-

մինը «քարտուղար» ա, մինը «բժիճ», մինը «տեղ-կոմ», բոլորն ել բանվորներ, իսկ Մուկուչ «խեղճ մարդ ա, իւղճ ել կմնա...»:

Ճշմարիտ ե, Մուկուչը զիտե, վոր «բանվոր ե կա, բանվոր ել», սակայն նա լավ չի ըմբռնում վորակյալ գիտակից ու զեռ անդիտակից բանվորի միջև յեղած տարբերությունը: Մուկուչի արտադրության գործիքը նրա ավելին ե, իսկ մտավոր ամբողջ շահազըրդությունը կապված ե իր հացի պարկի հետ՝ նրա համար հասարակական աշխատանքը, ժողովները լոկ ավելորդ ժամավաճառություն են:

Սակայն մի գեղլք գալիս ե նրան գուրս բերելու մտավոր անշարժությունից և պաստիվությունից: Մի առավոտ պարզվում ե, վոր գործալ անի պահեստից մի կապոց կաշի յեն գողացել: Նոր կառավարիչը, հին կարգերի պաշտպան մի մարդ, Մուկուչին մեղադրում ե գողության մեջ: Նա գաղաղած առում ե Մուկուչին. «Պահապան ես, ուրեմն մեղավոր ես»: Զբարտությունը ծանր ճնշում ե Մուկուչի ուսերին:

«Որը մթնում ե, Մուկուչի սիրուն ել նրա հետ»՝ Բնագարար նա զգում ե, վոր զողությունը կատարված ե ներսից: Նա կասկածում ե, և չի սխալվում, վոր գործարանի սափրիչն ե գողը: Չե վոր իրեն հայտնի յեն սափրիչ Բախչոյի արածները. «Դե Մուկուչը եռ քոռ չի, տեսնում ա՞վհնց ա եղ փուչ Բախչոն նոր առած ածելիները փոխում իր սեփական հների հետ: Գողանում ե գոզնոցի ու յերեսորբիչի համար տված կտորներից»: Նա զիտե, վոր այդ ժուլիկ մարդը «իսորհրդային» սափրիչ ե դառել, վոր իր սեփական գործերը դրստի, սարքը գողանա ու հետո

իր համար ջոկ արենատանոց բաց անին: Նա տեսմում է, թե ինչպես սափրիչը քչիչում ե կառավարչի ականջին և ահա նրա յերեակայության մեջ պատկերանում են հարյուրավոր սափրիչներ ու կառավարիչներ, վորոնք մեծ-մեծ ածելիներ առած գալիս են իրան մորթելու»

Գործարանային ժողովը քննում ե գործը, հայտաբերվում ե իսկական հանցավորը, Մուկուչը շնչած ե, նա չի հասկանում ժողովում կատարվածը: Հանկարծ ամենքը նրան են դիմում «Ըսկեր Մուկուչ, ընկեր Մուկուչ» կանչելով, շրջապատում նրան, շնորհավորում:

«— Հընկեր Մուկուչ, քեփդ քյոք պահիր, յետեիդ սարի նման կաղնած ենք»:

Գործարանային միաձույլ կոլեկտիվը հուժկութագուկներով Մուկուչին գուրս ե քաշում իր թմրած, անիմաստ գոյությունից, բարձրացնում «իսկական մարդու» աստիճաննին: Կատարվում ե վճռական բեկումը: Մուկուչը առաջին անգամն իր կյանքում զգում ե, վոր ինքն ել մյուսների նման բանվորական մեծ ընտանիքի անդամ ե, վոր նա այլևս այն մոռացված, արհամարհված, գրեթե կիսավայրենի արարածը չե, այլ «ասես մեծանում ե, աժդանա յե դառնում, բարձրանում ե, կոները լցվում են արյունով, ու հըպարտ-հպարտ նա կանչում ե, իմաց անում բոլորին».

«— Հեյ լավ իմացեք, սրանից դ'նը ել ինձ վոչ մի բան չի հաղթիլ»:

Անցել ե յերեք տարի: Ահա նույն գործարանը, վորտեղ աշխատում ե Մուկուչը, Բանվորական կուլեկտիվի ժողով ե հրամիթրված քաղաքական մի կարևոր

հարցի առթիվ, իրար հետկից հանդես են գալիս
բանվորները: Նրանք խոսում են սոցիալիստական
յերկրի որեցոր մեծացող նվաճումների մասին, Խոր-
հրդային Միության անպարտելի ուժի մասին: Հան-
կարծ նախագահող բանվոր Սահակը հայտարարում ե-
նուքը պատկանում է ընկեր Մուկուչին:

Հեղինակը նկարագրում ե, թե ինչպիս ամբիոն
ե բարձրանում մազերը կարճ խուզած, յերեսը ածի-
լած մի բանվոր և սկսում ե խոսել հուզված շեշտե-
րով, նա խոսում ե այն մասին, վոր այլես վոչ մի
ուժ աշխարհում չի կարող հաղթել բանվորների ու
գյուղացիների մեծ պետությանը: Դահլիճում թնդում
են ծափահարությունները: Հեղինակը հարց ե տալիս,
ով ե այս բանվորը, նրան պատասխանում են, վոր
դա նախակին Մուկուչն ե: Ահա նա իր ճառը վերջաց-
նում ե հետեւյալ խոսքերով: «Ել սրանից գենը մեզ
վոչ մի բան չի հաղթիլ»:

Ուրեմն սա յե այն անխոս ու յերկուս Մուկուչը:
«Ինչպես թե, բա մեր գնացին նրա խոպան սիրութը,
նրա փթանոց կորիկները,—հարց ե տալիս հեղինակը»:

Հենց այդ ե խնդիրը, «Անփոփոխելի» Մուկուչը
յենթարկվել ե արմատական փոփոխության: «Մու-
կուչի նշանավոր կոշիկները և հացի պարկը մուզեյ
ենք ուղարկել»—պատասխանում են հեղինակին:

Այս կատակը ստանում ե հատուկ իմաստ: Այդ
անշունչ իրերը իմաստավորվում են վորպես նախկին
Մուկուչներից անբաժան հատկանիշներ, անվերադա
անցյալի սիմվոլները: Հեղափոխությունը միայն կա-
րող եր կատարել այդ հրաշքը: Իսկ Մուկուչի մեջ
կատարված փոփոխությունը բնորոշ ե հռկայական

գանդվածների համար, վորոնց բարձրացրեց հեղա-
փոխությունը իրավազոր մարդկանց աստիճանին: Արագին գետիս 1924 թ. զրած իր այս և մի շարք
այլ պատմվածքներում ունալիստորեն մոտենալով մեր
եպոխայի այս նշանավորագույն խնդրին՝ կառողացել
ե գեղարվեստական պաւկիրների, տիպական խարակ-
տերների միջոցով ցույց տալ այդ պրոցեսը:

Մուկուչի մի այլ արբերակն ե Հանեսը:
չքավոր գյուղացի, փոքր հասակից բատրակ հարուստ
աղայի մոտ, ճնշված, ճպմված աշխարհի զորեղների
կողմից, նա անզոր ե նրանց դեմ, տգետ ե, գրեթե
կիսավայրենի, քաշ ե տալիս մի կյանք, վոր քիչ ե
սարբերվում անասնականից: Նրան ծեծում են ու
նախատում, ծաղրում և արհամարհում:

Փոքր հասակից մայրը ներշնչել ե նրան հնա-
դանդ լինել մեծերին, հարուստներին, գլուխ չդնել
զուրացների հետ, թե չե վայ նրան: Յագ Հանեսը վա-
խեցած ե, և փոքրուց, նրան տվել են «Աչքը վախե-
ցած Հանես» սականունը:

Վրա յի հասնում պատերազմը, հետո հեղափո-
խությունը: Հանեսը, ինչպես և նման շատերը, չի
կարողանում ըմբռնել կատարվող իրադարձություն-
ների իմաստը: Սակայն նա իր աշքով տեսնում ե,
վոր իրոք փոխվում ե աշխարհը, վոր բոլենիկները
պաշտպանում են չքափորներին ու բատրակներին
կուլակների ու հարուստների դեմ, վերցնում են նը-
րանց լավ հողերը և տալիս չքափորներին: Իրեն ել
բաժին ե ընկնում իր նախկին աղայի՝ Մաթուանց
Արմոնի հողից: Սակայն հեղափոխության առաջին
տարիներն են, յերբ կուլակը գեռաւ տնտեսապես ի-

բեն զորեղ և զգում, Մաթոսանց Սիմոնը չի կարողա-
նում հաշտվել այն մտքի հետ, վոր իր «սեփական»
հողը տալիս են իր նախկին բարրակին, այն քաղցած,
տկոր խեղճ ու կրակ արարածին, վոր սարսափում
իր իրենից:

Գաղաղած Սիմոնը փորձում և կրկին «վախեց-
նել» Հանեսին, վորպեսզի սա ձեռք վերցնի նրա
հողից: Հանեսը այս անգամ համառում ե, նա վճռում
և պաշտպանել իր ստացած իրավունքները: Սակայն
նա մենակ անզոր և դեռևս ուժեղ կուլակի գեմ: Վեր-
ջինս իր վորդու հետ միսասին դաշտում հարձակվում
են Հանեսի վրա և խլում են նրա հնձած խոռոք:
Հանեսը բողոքում ե գյուղի հեղկոմին: Հանեսի մըտ-
քում կասկածներ են ծագում խորհրդացին իշխա-
նության գյուղական ներկայացուց իշխերի վարքագծի
վերաբերմամբ: Ինչու նրանք ավելի վճռական չեն
կուլակների հանդեպ, վախենում են, թուչ և: Կուլակը
շարունակում ե իր սպառնալիքները: Հանեսն իր ցա-
վի մասին պատմում ե գյուղի նոր նշանակված կոմի-
սարին, վորը համապյուղացի նախկին կարմիր բա-
նակային և մասնակցել ե քաղաքացիական կուլ-
ներին: Կոմիսարը ծիծաղում ե Հանեսի վախկոտու-
թյան վրա: Ի՞նչ տղամարդ ես դու, առում ե նրան:
Նախկին կարմիր բանակայինը չի կարողանում պատ-
կերացներ վոր կուլակը խորհրդացին կարգերի որով
կարող ե հանդինել դուրս գալու պրոլետարական հե-
ղափոխության դեմ: Նա չի ըմբռնում, վոր դասա-
կարգային պայքարն այժմ փոխել ե իր ձեռ, նա
կարծում ե, վոր թշնամին արդեն վերջնականապես
ջախջախված ե քաղաքացիական բաց մարտերում:

Անօահման հավատ ունենալով զեսլի հեղափո-
խության ուժը, կոմիսարը Հանեսին տալիս ե իր զին-
վորական սաղավարտը, վորպեսզի նա տնկի այդ սա-
ղավարտն իր արտում՝ Մաթոսանց Սիմոնին վախեց-
նելու համար: Թերեւս զա կատակ եր կոմիսարի կող-
մից, սակայն Հանեսը լուրջ է ընդունում այդ: Կար-
միր բանակային սաղավարտը (շեմ) նրա աչքին
դառնում ե հեղափոխության սիմվոլ, այն հեղափո-
խության, վորը յեկել եր նոր կարգեր հաստատելու
գյուղում, ազատելու չքավորներին կուլակների կե-
ղեքումից:

Մաթոսանց կուլակ Սիմոնի և չքավոր գյուղացի
Հանեսի միջև մզված խուլ պայքարն ունենում ե
զրամատիկ վերջավորություն: Յերբ զաղաղած Սի-
մոնը հարձակվելով Հանեսի վրա միաժամանակ ու-
զում ե պոկել արտում տնկված սաղավարտը՝ Հանեսը
սպանում ե նրան:

Սա մի անսպասելի ակտ եր «աչքը վախեցած»
Հանեսի համար, սակայն հեղինակը համոզում ե ըն-
թերցողին, ոեալիստորեն պատճառաբանելով այդ ակտը՝
պատմվածքում զարգացող գործողություններով: Բը-
նորոշն այն ե, վոր Հանեսը կատարելով այդ սպա-
նությունը զգում ե իրեն մի ծանր բեռից թեթևացած:
Յեվ յեթե այդ բռպեյին մոտենային նրան և հար-
ցաքներին,—ասում ե հեղինակը,—Հանեսը զիտեր թե
ինչ պիտի պատասխաներ, —Յես եմ սպանել և յեթե
վեր կենա, նորից կսպանեմ»:

Արագին ճանաչում ե հին, սեփականատիրական
գյուղը, վորտեղ իշխում ելին շշահագործող—կուլակը,
արյունարրու—վաշիտուն, սպեկուլյանտ—վաճառա-

ռականը, տերտեր—ուրյադնիկը» (Ստալին), վորտեղ
մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը
մարդկանց մեջ ստանում եր բիրտ, այլանդակ ձևեր,
վորտեղ «ջրի կոփվը» վերջանում եր յերեմին իսկա-
կան արյունանեղությամբ, վորտեղ չքավորության
անասելի կեղեքման միջոցով ստեղծվում, եր գյուղա-
կան սարդ հարուստի կարողությունը, Սեփականա-
տիրական հոգեբանության մարմացումն և հանդիսա-
նում «Փուշ Աբելը»:

Ահա մեր առաջ պատկերանում ե գյուղական
հարուստի՝ կուլալի տիպը, վորն իր դասակարգի
հատկանիշների խտացումն եւ Նա մի ամբողջ ոոց-
իալական խարակտեր ե, վոր Արագին նկարում ե,
բալզակյան տիպերին բնորոշ գծերով: Գյուղական այս
հարուստի սեփականատիրական դղացմունքը հասնում
ե մոլեկոնության աստիճանի: Նա փշի բարձր ցանկա-
պատով պատել ե իր խորհրդավոր այգին, և յեթե «ձեռո-
քից զա՝ յերկնքի կողմից ել կշափարի իր բաղը»:
Աբելը ծայր աստիճանի կասկածամիտ ե, վոխակալ,
անտեղի վրիժառու «յերեւի և աներեւյթ» գողերից,
փողոցի պատահական անցորդներից: «Յեթե հնար լի-
ներ, նա հաղար դամբռ բաց կթողներ այդ հանդուզն
մարդկանց գղելու, խեղդելու համար»: Նա իր շանն
ավելի յե սիրում, քան իր զավակներին: Իր սեփա-
կանատիրական այդ մոլեգին զգացմունքը Աբելին
դարձնում ե դեսպոտ, դաժան, կովարար, իր սեփական
ընտանիքում իւկ: Նա տանջում ե իր կնոջը, թե
«ինչն յեն հաց տվել աղքատին», ինչու շանը չեն
նայել և այլն:

Ենք ահա մի որ բոլուսիկները վարոշում են վերց-

նել նրա այդին և տալ գյուղի դպրոցին: Նա կատաղի
դիմադրություն ե ցույց տալիս. Աբելը չի կարող
յերբեք հաշտվել այն մտքի հետ, վոր «իր» այգին
այլևս չիրենը չի: Նա մոտենում ե «իր» այգուն և
զարմանում, վոր այդ ցանկապատն այժմ իր տի-
րոջ գեմ ե, իրեն ներս չի թողնում... «ի՞նչ անի, կոտրի
դուռը, պատոի չափարը... ավելի շուտ ժամ կկողոպատի,
քան թե իր չափարի վրայով կանցնիր: Յերբ կիսա-
խելագար Աբելը տարված իր սեփականությունը
վերադարձնելու սկզբուն գաղափարով վորոշում ե
գնալ և գանգատվել լենինին, մենք զգում ենք դրու-
թյան վողջ կոմիկականությունը: Արագին արտա-
քուստ մեղմ յումորի վարագույրի տակ տալիս ե սո-
ցիալական սատիրա, մերկացնելով մասնավոր սեփա-
կանատիրոջ դասակարգային եյությունը:

Արագին նկարել ե «տիպիկ մի խարակտեր տի-
պիկ հանգամանքներում», գեղարվեստորեն կատարե-
լով սոցիալիստական ոհալիզմի այդ կարևոր պա-
հանչներից մեկը:

Արագին իր մի շարք այլ պատմվածքներում
տալիս ե դասակարգային պայյօարի տարբեր մոմենտ-
ները քաղաքի և գյուղի սոցիալիստական վերակա-
ռուցման փոնի վրա: «Աչքը վախիցցած Հանենը»,
«Լույսերը», «Հաղար գլխանի» և այլ մի շարք պատ-
մվածքներ ցույց են տալիս, վոր հեղինակն ըմբռու-
նելով յերկրում կատարվող տեղաշարժերի եյու-
թյունը, կարողանում ե կատարել տիպական ընդհան-
րացումներ, առանց շարլոնի և «խեմատիզմի, զար-
մանալի պարզությամբ, տալ իրականության զար-

գացման տեսպէհնցները, յերբեմն հաճնելով եմոցիոնա պաֆոռի, առողջ ռոմանտիկայի:

Այդպիսի պաֆոռով ե գրված որինակ «Հույսից» պատմվածքը, վորն ավելի չուտ նման ե արձակ պուեմի: Այստեղ առանց շեշտված «բանաստեղծական» և արհեստական ձիգի, Արագին յերգում ե հիդրոկայանի կառուցման թունելներում գիշեր ու ցերեկ յեռացող աշխատանքը: Պատմվածքի սկզբում հեղինակը տալիս ե լույսերի հմայքը, նրանց խաղը գիշերվա խափառում:

Ամայի, անդնդախոր ձորում կառուցվող հիդրոկայանի հերթափոխ բանվորները վերադառնում են աշխատանքից իրենց լապտերներով: Հեռվում կայծկըլտում են բանվորական շենքերի հեկտրական լույսերը վորոնք ամեն գիշեր «պայծառ ու զվարժ շարվում են... և ուրախ ցուքերով ասես կանչում են նայողներն»:

Ահա բանվորներն իրենց լապտերներով: «Խորհրդավոր են թափառող այդ լույսերը, նրանք մերթ ծածկըլում են ժայռերի հետևում, մերթ նորից հայտնվում: Յեկ թվում ե հեռվից, թե մարդիկ չեն շարժվողները—այլ լույսերն են թովուում հոկա լուսատիտիկների նման—ոճապտույտ կածաների վրայով»:

Այսուհետև Արագին լույսերի այս սիմվոլական պատկերացման ֆոնի վրա ուրվագծում ե մութ ուժերի, դասակարգային թշնամու դավադրությունը բոլշևիկ բանվոր Ակորի դեմ:

Ակորը Բագվից յեկած բանվոր ե, վորը դարձել ե գյուղի սոցիալիստական վերակառուցման, կոլտընտեսային շինարարության ենտուզիաստ: Կուլակներն ատում են նրան, ինչպես վոխերիմ թշնամու, նրանք

մահափորձ են կազմակերպում Ակորի վրա և վիրապ վորում են նրան:

Ուտք ե ատել, վոր Արագին այստեղ չի կոնկրետացնում յերեռյթները, չի տալիս գյուղի սոցիալական ունակ հարաբերությունները, պատմվածքի բնույթը կարծես այդ չի պահանջում: Յեկ այդպես ել ե: Հեղինակը տալիս ե յերեռյթի սիմվոլական ընդհանրացումը՝ լույսի և խավարի հակադրման միջոցով: Սոցիալիզմի լույսերն են, վոր գալիս են լուսավորելու գյուղի խավարը, իսկ զառակարգային թշնամին փորձում ե մարել այդ լույսերը: Վիրավոր Ակորը տենդային յերազի մեջ տեսնում ե լեռնին և խոստանում ե նրան մինչև վերջը պայքարել այդ խավար ուժերի դեմ, վորոնք ուզում են մթագնել գյուղի սոցիալիստական վերակառուցման լուսավոր հանապարհը:

Սոցիալական ավելի կոնկրետ հարաբերություններ մենք տեսնում ենք «Հավար զիխանի» պատմվածքում: Այստեղ Արագին մերկացնում ե, դիմակաղերծ ե անում դառակարգային թշնամուն և նրա գործակալ ոպրոտունիստ Մինասին, վորոնք ամեն կերպ աշխատում են խափաներ, խոչընդուռ լինել կոլտնտեսային շինարարությանը և այդ նպատակով խծկում են կոլտնտեսության մեջ այն ներսից պայթեցնելու համար:

Արագին այս պատմվածքը գրել է 1931 թվին, սակայն նա կարողացել է գեռես այն ժամանակ նկատել զասակարգային թշնամու այդ նոր մանյովը, նրա դիմաղրության նոր մեթոդները: Արագին վերընում ե կոլտնտեսային շարժման այն ետապը,

յերբ կոլտնտեսությունները անտեսապես և քաղաքաւ կանապես դեռ չեցին ամրապնդվել հատկապես մեր Միության ծայրամասերում, յերբ դասակարգային թշնամին՝ կուլակը կարողացել եր տեղատեղ իր ագենտուրան ունենալ նույնիսկ այնպիսի մի կարեօր պոստում, ինչպես ին կոլտնտեսության նախագահի պոստն ե:

Այդպիսի մի գործակալ ե Մինասը, վորը լինելով կոլտնտեսության նախագահ, սերտ կապեր ունի գյուղի կուլակների, նրանց գլխավոր Առաքել աղայի հետ: Նա խորհրդակցելով կոլտնտեսության մասին Առաքել աղայի հետ, ասում ե նրան... «Են ել քեզ հայտնի ա, Առաքել ապի, կոլխոզի մասին խորհուրդ արինք, ասինք,—քանի վոր եղ կոլխոզ ասած ցավը մեղ մոտ ել ա գալու, պետք ե մեջը մեր մարդն ունենանք, վոր գործը քանդի, իսկ թե բան ա, չկարողանա, գոյնա ձգձգի, հարամ անի»:

Այս պատմվածքում Արագին տալիս ե դառակարգային պայքարի ընորոշ մոմենտներից մեկը գյուղում: Կուլակի գործակալ Մինասը մերկացվում ե նախկին չքափոր, ակտիվ կոլտնտեսական Բենոյի ջանքերով, վորին ոժանդակում ե ամբողջ կոլեկտիվը: Բենոյ՝ դա նույն չանհան ե, նույն «ընկեր Մուկուչը», վորը հասել ե իր գասակարգային շահերի գիտակցությանը, կարողացել ե հաղթահարել իր մասնավորսկանատիրական բնությունը և ըմբռնել ե կոլտնտեսային կարգերի նշանակությունը:

Նախկին չքափորը, վորին գյուղում «կանդիտատ» ծաղրական մականուն են տվել, այժմ դարձել ե տկտիվ նախաձեռնող, հասարակական շահերի համար պայքարող կոլտնտեսական, վորը գիտակցում ե կո-

լեկտիվի ուժը, գիտե, վոր ինքն այժմ վոչ թե մեկ, այլ «հաղար գլուխ» ունի: Այս ե պատմվածքի գաղափարը, վոր Արագին կոնկրետացրել ե գեղարվետական պարզ, տիպական պատկերների մեջ: Հաղթանակում ե կոլեկտիվ աշխատանքի գաղափարը: Ամբողջ գյուղը միահամուռ ջանքերով ձեռնարկում ե ջրանցքի կառուցման: Պատմվածքը վերջանում ե հաղթական, ուրախ ակլորդներով վորպես կոլեկտիվ, ողբիալիստական աշխատանքի սիմֆոնիա:

III

Յեթե համեմատելու լինենք Արագու ոկրպենական շրջանի կարճ նովելլները նոր շրջանի պատմվածքների հետ՝ չենք կարող չարձանագրել գրողի ստեղծագործական անընդհատ աճման փաստը: Այժմ նա տալիս ե կոնկրետ խարակտերներ և տիպեր, վորոնք հանդես են գալիս, դրսերզում են իրական, տիպիկ հանգամանքներում, գործողության մեջ: Նրա անձնավորություններն իրական են, կենդանի, անհատականացված, բայց և այնպես միաժամանակ տիպական են, ոժուված ողբիալիստական հատկանիշներով:

Արագու ուելիստական մեթոդի առանձնահատկություններից մեկն ե պատկերացման պարզությունը: Այդ պարզությունը հաճախ մակերեսային ընթերցողից թագծում և պատկերացված յերեվութիւնունը, պատկերի ներքին իմաստը, վոր հաճախ ենդինակը տալիս ե լայն ընդհանրացման միջոցով: Արագին իր ռեալիստական մեթոդին վարպետորեն, որդանապես միախանութեմ և յերբեմն հեղափոխական սամանտիկայի և սիմվոլիկայի տարրեր, վորոնք հարստացնում են

Նրա հիմնական մեթոդը և նշում են այն ուղիներից մեկը, վոր տանում ե դեպի սոցիալիստական ռեալիզմի վոճի ստեղծումը: Քչերին և հաջողվում լուծել այս գժվարին խնդիրը, առանց ընկնելու ծայրահեղությունների մեջ:

Արագին ունի գեղարվեստական չափի զգացում և տակտ, վոր նրան հնարավորություն և տալիս նույնիսկ ամենաթժվար թեմաներ վերցնելիս, խուսափել յերկու գլխավոր վտանգից՝ նատուրալիզմից և սիեմատիկ, հուստորական ռոմանտիզմից: Արագուստեղծագործական մեթոդի հիմնական հատկանիշը՝ պարզությունը—նրան հասկանալի յե դարձնում ընթերցողների ամենալայն մասսաների համար, առանց վասելու իդեալի խորությունը:

Արագին չի սիրում ստեղծել արհետական բարդություններ ինչ վոր—«նովատորության» ձգտումով, կիրառել ձեական, ինքնանպատակ հնարներ զուտ արտաքին եֆֆեկտի հառնելու նպատակով: Սակայն նա կարողանում է հառնել հաճախ բարձր եֆֆեկտի անսպասելի կերպով՝ լոկ մի ֆրազի միջոցով, առանց ճիգի և հոեատորական «ֆրազի», մի հփփեկտ, վոր հաղեցված և ներքին խոր բովանդակությամբ: Որինակի համար հիշենք հիտեյալ ֆրազը «Կարմիր համբույրը» պատմվածքից:

— «Հարգմնք, ով անգղ, դեպի մարդկային ուղեղ...»:

Սա այն պատմած եֆֆեկտը չե, վորին հասնելու համար յերբեմն հեղինակը կիրառում է հատկապես վորոշ ձեեր, նախապատրաստելով ընթերցողին ընդունելու այդ վորպես գրական վարպետության մի փայ-

լատակում՝ վորպես արտաքին որնամենտ դրվածքը գեղեցկացնելու համար: Արագին խուսափում և արտաքին փայլից, նա կարծես ունի վարպետի պրոֆեսիոնալ այն համեստությունը, վոր նրան հարկադրում է հրաժարվել բառերի շաբաթից և կազմական որնամենտիկալից: Սակայն չնայած այդ բոլորին Արագուն կարելի յե համարել ձեի նովատորը:

Արագին կարողանում է յերևույթները դիտել յուրահատուկ կերպով և նրանց ներքին իմաստը դրսերել վոչ կազմակարգած, շամապի վերածված պատկերների միջոցով, այլ ինքնուրույն, թարմ հըպացումների, ըստ յերևույթին շատ պարզ, բայց ներքուստ խոր և ընդհանրացված պատկերների միջացով:

Այդպիսի ընդհանրացված պատկերը—սիմվոլ և դասնում, որինակ արծաթի ծանրության տակ ձզմված մշակի պատկերը («Արծաթի տակ»): Դա իմպերիալիստական կապիտալի (անգլիական բանկի) կրունկների տակ ձնշված գաղութային բազմամիլիոն աշխատավորությունն ե, վորի ներկայացուցիչը՝ պարսիկ աժդահա հասնում է անշունչ՝ «բանկի սանդուխըների վրա, վորպես մի զոհ հին մեհյանների առաջ»: Արագին այսուղ հասնում է եմոցիոնալ ներզործության մեծ ուժի, յերբ անոպաելի կերպով բերում է կլասիկ դարերից մի պատկեր, մի համեմատություն, ըստ յերևույթին բարձր վոճի, ոսկայն կարողանում և ոգտագործել այդ համեմատությունն այնպես պարզ ու բնական ձեռվ, վոր վոչ մի խորթ կամ կեղծ նոտա չի խախտում վոճի որդանական ամբողջությունը:

Սակայն Արագին միորինակ գրող չե, բարձր եմոցինալ հագեցվածության կողքին նա ունի յումորիտական-սատիրական մոտեցման հատկությունը, յերբ նա մերկացնում ե անցյալից մնացած դասակարգանորեն խորթ յերեսույթները, մասնավորապես կականատիրական, բուրժուական հառարակությունից ժառանգություն մնացած հոգեբանությունը, մանրբուրժուական ներ մտայնությունը, քաղքինիությունը: Այստեղ Արագու ծաղրը հաճախ սպանիչ ե, սակայն առանց մաղձու կամ թունու լինելու:

Արագին ունի մի շարք պատմվածքներ, վորոնց մեջ պատկերացնում ե «նախկին մարդկանց» հոգեբանությունը: Դրանցից մեկն ե «Հարմարյանի հուշատերից» պատմվածքը: Այդ պատմվածքում, վոր գրված ե հուշատերի ձևով, Արագին վարպետորեն տիպականացրել ե մանր-բուրժուական հոգեբանության տեր մի ինտելիգենտի՝ խորհրդային ծառայողի խարակտերը:

Դա հարմարվող քաղքենու, ոպորտունիութի մի տիպ ե, վոր նկարված ե կենցաղային-հոգեբանական ֆոնի վրա: Արագին տալիս ե մի ամբողջ խարակտեր տոփերական քաղքենու, վորը վորոնում ե «հոգու հարմոնիա», ընդունում ե «նույնիսկ ոսցիալիզմը վորպես ապագայի մեծ հարմոնիա», միայն թե վախենում ե «այդ մեծ հարմոնիայի ճանապարհին կորցնել իր փոքրիկ հարմոնիան», իր ընտանեկան իդիլիան, իր Մարգոյին», վորը, ի դեպ առենք, դավաճանում ե ամուսնուն:

Դրաւթյան կոմիզը հեղինակն ընդգծում ե այնպիսի նուբբ իրոնիայով, վորն ամբողջովին մերկաց-

նում ե «տիեզերական քաղքենիության» հոգեկան ամբողջ վոչնչությունը:

Արագին յերբեմն իր անձնավորություններին ոժում ե այնպիսի անուններով, վորոնք իրենց իմաստով ծառայում են վորպես խարակտերիստիկայի միջոց: Անկասկած սա խարակտերիստիկայի արտաքին հնարք ե, վոր Արագին կիրառում ե զգուշությամբ, առանց ընկնելու կոմեդիական կարգի ծայրահեղության մեջ: Որինակ մեր հիշատակած վերջին պատմը-վածքի հերոսը կրում ե Հարմարյան անունը, վոր լրացնում ե տիպի խարակտերիստական: Նույնն ե նաև «Հաղար զլիսանի» պատմվածքի յերկու հերոսների վերաբերմամբ, վորոնց անուններն ըստ իմաստի ծառայում են շեշտելու նրանց խարակտերիստիկան, գրանք են Գառնակերյանը և Հացիկյանը: Ցերկուանուններն ել համապատասխանում են իրենց կրողների խարակտերիստիկային՝ Գառնակերյանը մեծ կալիբրի գիշտիչ և զնառարար, գառակարգային թշնամու ակտիվ աղենտ, Հացիկյանը՝ առաջինի գործակիցը, վախկոտ ոպորտունիուտ, «համեստ» մասարար:

Այս տեսակետից ել Արագին ոգտագործում ե կլասիկներին (Գոգոլ, Դոստոևսկի, Շչեղրին) ընութագրման այդ յեղանակը կիրառելով, սակայն նա այդ անում ե չափի զգացումով, առանց ընկնելու ֆարսային գրոտեսկի մեջ, վորով յումորը չի կորցնում իր ուսալիստական ֆունկցիան և հնարքը հանդիս չի գալիս վորպես հատկապես ընդգծված արտաքին եփփեկտ:

Գետք ե նկատի ունենալ, վոր այս հնարքը հերինակը կիրառում ե բացառական անձնավորություն-

ների վերաբերմամբ, միանգամայն արդարացնելով նրա գործածությունը յումորական-կոմիկական պլանի վրա:

Մենք արդին նշեցինք, վոր Արագին առաջին անգամ գրականության մեջ հանգես և յեկել սատիրական-յումորիստական մի գրվածքով։ Հեղափոխությունից հետո Արագին ավելի ես զարգացնում ե իր ստեղծագործության այդ առանձնահատկությունը, վորն առնասարակ վորեն մի գրողի լավագույն հատկություններից մեկն ե։ Մ. Գորկին պատմում ե, թե ինչպես Կորոլենկոն հենց ոկզրից նկատում և գնահատում ե նրա յումորը. դա մի հատկություն ե, վոր առանձին դրավչություն և տալիս գրողին և վաստակում ե ընթերցողի համակրանքը։

Յումորի միջոցով թեթև կերպով ծաղրվում են կյանքի բացառական կողմերը, մարդկանց թերությունները և հիմարությունները, սակայն յերբ խոսքը վերաբերում է մարդկության թշնամիներին, այդ յումորը դառնում ե սպանիչ, վերածվում ե խայթող սատիրայի, սա արդեն սովորական իմաստով յումոր չե, այլ սարկագմ։

Արագու վոճին ավելի հատուկ ե յումորը, վորը նա նորությամբ կիրառում ե կյանքի բացառական յերկույթները մերկացնելու համար։ Արագու մոտ զարմանալի ներդաշնակությամբ միախառնվում են մերիկան և յումորը, խորքում պահպանելով հեղինակի սեալիստական հիմնական յերանգը։

Մ. Գորկու որինակը հօկայական նշանակություն և ուսեցել հեղափոխական պրոլետարական գրականության հետևողների աճման և զարգացման մեջ։ Անժիստելի յի պրոլետարական սոցիալիստական գրականության հիմնադրի գերը Արագու ստեղծագործական մեթոդի կազմակորման գործում։

Հայտնի յե, վոր դեռևս հեղափոխությունից առաջ Մ. Գորկին քաջալերում և խրախուսում եր պրոլետարիատի շարքերից դուրս յեկած, ինչպես և նրա շարքերում աշխատող բանվոր գրողների գրական փորձերը։ Նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ և հրատարակված պրոլետարական գրողների յերկերի առաջին ժողովածուները։ Մ. Գորկու որինակը վոգելության աղբյուր և դառնում գրական նոր, պրոլետարական ուղղությանը հետևող յերիտառարդների համար։ Այդ մեծ որինակը չեր կարող չվոգելու և Արագուն, վորն ինչպես հայտնի յե, 1914 թ պրոլետարական խոշոր պղնեալ Հակոբ Հակոբյանի հետ խմբագրում և «Կարմիր մեխակներ» և «Բանվորի ալբոմը» ժողովածուները։

Մենք արդին տեսանք, վոր այլաբանական ձևը ոպտագործելու հարցում Արագին նույնպիս հետեւել և Մ. Գորկու տրագիֆիային։ հայտնի յե, թե հեղափոխական ինչպիսի խոր բովանդակությամբ և տոգորված Մ. Գորկու այլաբանական-սիմվոլական արձակ բանաստեղծությունները, պատմված քնները և հեթաթները։ Արագու մոտ, ի հարկե, հեղափոխական պահուը, պայքարի թափը հանդես չեն գալիս այնպիսի ուժգնությամբ, ինչպես պրոլետարիատի մեծ արքեստագետի մոտ։ Արագու բնույթին ավելի հատուկ ե մեղմությունը, լիրիկական թախիծը, վոր նա զգում ե տեսնելով մարդկանց տառապանքները («Արյունու ծաղիկներ», «Արև», «Վերջին տերեկը» և այլն), սակայն Արագու մոտ վիշտն ու թախիծը յերբեք չեն հանում վհատության։ ընդհակառակը, նա հավատում է պայքառ ապագային, նա չի տրանջում և թախծում

ինդիվիդուալիստ և սիմվոլիստ պոետների պես, վորոնք հանդիսանում եյին բուրժուական գեղադենութիւ տիպիկ ներկայացուցիչները:

Արագու ստեղծագործության այս բնույթը աշվելի նկատելի յե 1905 թ. հեղափոխության պարտությանը հաջորդող ռեակցիայի տարիներին: Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակից հետո, ինչպես տեսնում եք, նրա այդ լիրիկական թախիծը, մինոր տոնը վերանում են և նրանց հաջորդում են կայտառ և զվարթ ակլորդներ. հեղափոխությունը հեղաշոջում և Արագու ստեղծագործության բնույթը. լիրիկական նուրբ թախիծին հաջորդում եռ ուրախ յուրը, հանդես ե գալիս ռեալիստ գրողը, վորը կյանքի յերևոյթներին մոտենում և հաղթանակող պլոտեարիատի տեսանկյունից, տեսնում ե կյանքի զարդացումը և առաջընթացը սոցիալիզմի ուղղությամբ. մշակում ե իր գրական նոր վոճը — սոցիալիստական ռեալիզմը:

IV

1933 թ. լույս տեսավ Արագու պատմվածքների չորրորդ ժողովածուն «Յեկվորներ» վերնագրով, վորի մեջ ամփոփած և հեղինակի առաջին մեծածագաւ վիպակը, վորը գրավում է ժաղովածուի համարյակեսը:

Դա առաջին գրվածքն է, վորի մեջ Արագին ընդարձակում ե իրեն հատուկ կարճ պատմվածքի ահմանները, վերցնում ե կյանքի ավելի լայն կտակ և վորին ամենից ուշագրավն է, գրվածքին տալիս է

կիսառատոպիտական, չֆանտաստիկան բնույթը, վիպակի կեսից սկսած պատկերելով ապագա կոմունիստական հասարակությունը:

Ապագան պատկերելու այս փորձը ևս ավելի ուշ ազգավ ե, նկատի ունենալով, վոր հայ խորհրդագին գրականության մեջ գրական նման փորձեր գրեթե չեն արվել: Հետաքրքրական է նաև այն, վոր հեղինակը կարողացել ե Փանտաստիկական տարրը սիրառեն շաղկապել, հյուսել սոցիալիստական շինարարության առողյայի հետ, կոլտնտեսային կարգերի հաղթանակի համար մղվող պայքարի հետ: Յեկ պետք ե ասել հեղինակը կարողացել է անել այդ հնարամիտ և վարպետ կոմպոզիցիայի միջոցով:

Արագին իր այս առաջին վիպակում առաջադրում ե կարենոր մի պրոբլեմ — սոցիալիզմ կառուցող նոր սերնդի՝ տղամարդու և կնոջ պսիխիկայի կազմավորումը սոցիալիստական շինարարության բովում: Գործողությունը կատարվում է մի խորհանտեսության մեջ, վորտեղ վորպետ պրակտիկանու աշխատելու յեն յեկել յերկու ուսանող՝ Գուրգենը և Հասմիկը:

Հատ յերեսութին պետք ե ոկսվեր այն սովորական պատմություններից մեկը, վոր պատահում է նման գեղագերում, այսինքն՝ սիրահարություն «աշխատանքի պրոցեսում» և վերջը ամուսնություն կամ խզում ինչ-ինչ պատճառներով: Սակայն Արագին իր պատմվածքում այդ «սովորական պատմությանը» տվել է անսպասելի, որիցինալ լուծում: Նա իր յերիտասարդ հերոսներին պատմվածքի կեսից փոխադրում է ապագա կյանքը՝ կոմունիզմի աշխարհը, վորը վոչ այլ ինչ է, յեթե վոչ ներկայի որինաչափ զարգա-

ցումը, հարուսա մի բնագավառ, վորը անսպառ նյութ կարող ե տալ ֆանտազիայով ոժոված խորհըրդային ամեն մի գրողին Այս յերեվակայական տեղափոխությունը կատարվում ե խորհտնտեսության մոտակա մի բլրի վրա՝ լուսնի շողերի տակ, հենց այն գիշերը, յերբ Գուրգենը և Հասմիկը վերադարձել ելին հարեան գյուղից, վորտեղ խորհտնտեսության դիրեկտոր, հին հեղափոխական Միքայելի հետ միասին նըանք ներկա ելին յեղել կոլտնտեսության կազմակերպման ժողովին և ակտիվ կերպով մասնակցել նրան:

Կոլտնտեսային կարգը հաղթանակում ե, սոցիալիզմը վերջնականապես տիրապետում է կյանքի բոլոր բնագավառներին, սակայն կառիտալիզմի վերջին մացորդները մարդկանց գիտակցության մեջ դեռևս զգացնել են տալիս իրենց. Այդ հին մացորդներից մեկն ե՝ «աղամարդու գերիշխանությունը կնոջ նկատմամբ»: Այդ հոգեբանության մի փոքրիկ մնացորդ դեռևս թագուն պահպանվել ե յերիտասարդ կոմունիստ Գուրգենի «ուղեղի յենթագիտակցական շերտերում»: Այդ «գերիշխանությանը» դիմացըելու, «սիրային զողերից» պաշտպանվելու համար ե, վոր Հասմիկը ատրճանակ ե պահում իր մոտ: Այդ ժամանու «խաղալիքը» Հասմիկին տալիս ե առաջին հայացքից ինչ-վոր խորհրդավորություն: Սակայն հեղինակը պատճառաբանում է այդ մոտիվը, վորպես հնի, անցյալի սիմվոլ՝ ատրճանակը մերկացվում ե վիպակի վերջում, ապագա կոմունիստական աշխարհում, վորտեղ Գուրգենն ու Հասմիկը կատարում են իրենց յերեակայական ճամբորգությունը:

Զեխովը առում ե, վոր յեթե պիեսի առաջին գործողության մեջ պատից մի հրացան է կախված, ապա հետագայում այդ հրացենը պետք է պայթի: Արագու հերոսուհու ատրճանակը չի «պայթում», ուշակայն դրանով նրա ներկայությունը վոչ պակաս «պատճառաբանվում է», նա կատարում է իր գերը պատմվածքի սյուժետային կառուցվածքի մեջ, ուշակայն վոչ վորպես զուտ ձևական մոմենտ, այլ վորպես բովանդակությամբ հադեցած սիմվոլ, վորը ինչպես նշեցինք, մերկացվում ու արժեքազրկվում է անդասակարգ կոմունիստական հասարակության մեջ:

Յերբ ապագայի գիտնականներից մեկը, վորի զեկուցմանը ներկա յեն լինում մեր ենտուզիաստները, խոսում ե այն մասին, վոր «զենքերը դարձել են թանգարանների զարդեր»... հանկարծ Հասմիկն այլայլքեց:

«— Հիվանդ ես, — հարցրեց Գուրգենը.

— Զե Գուրգեն, բայց հիվանդից ել վաս եմ... Գրպանումս ատրճանակ կա, վերցրու»:

Վիպակի վերջում, յերբ յերկու յերիտասարդներն ավարտում են իրենց պատմությունն ապագայի յերկրի մասին —

«— Ի՞նչ բերինք ապագայի յերկըից, — հարցրեց յերիտասարդը: — Մի ողանավ ըերինք — «Դեպի ապագա» ողանավը Նա հիմա մեր թևերն ե դառել...»

«Իսկ ի՞նչ թողինք այնտեղ:

«— Յես թողի իմ ատրճանակը, — առում ե աղջիկը: — Իսկ յես թողի այնտեղ քո յերեակայած «անցյալի յենթագիտակցական մացորդները»...

Անկառակած Արագին նպատակ՝ չի ունեցել գրելու գույք «ուստապիական» մի վիպակ՝ հիմնված լոկ ֆանտազիայի վրա։ Նա փորձ ե արել՝ յելնելով ներկայից, նրա զարգացման տեսնդենցներից՝ վորոշ շտրիխներով տալ ապագա կոմունիստական հասարակությունը, վորի մեջ բնությունը նվաճված ե մարդկության կողմից, գիտությունն ու տեխնիկան վիթխարի նվաճումներ են կատարել։

«Մենք աշխատանքի յենք լծել բոլոր գետերն ու գետակները, հիդրոկայաններ կառուցել, լծել ենք քամին ու արել, — ասում ե «ապագայի բնակիչ» պրոֆեսոր Արեգյանը, — յերկերը փոխել ե իր վաղեմի դեմքը... մեր ամբողջ կյանքը մեծ պլանի մեջ ե առած. կա մի մեծ համաշխարհային պլանային խորհուրդ, վորը տարեկան չորս անգամ ժողով ե ունենում յերկրագնդի գանազան կետերում...»։

Հեղինակը իր հերոսներին տանում ե ապագա Յերևանը։ Նրանք սավառնակից ագահությամբ նայում են ցած։ «Հասմիկը նայում ե նախկին կայարանի կողմը, կարծելով, թե կդտնի մյուս թաղերը։ բայց գործարաններն ել չեյին ջոկվում— նրանք առանց ծխնելույզների եյին. իսկ նրանց շուրջն այնքան նոր ծառաստաններ, որ շենքեր կային, վոր նաչկարողացավ մի բան պարզել... միայն Զանգու գետն եր ձգվել ոձի նման, բայց նրա ափերն ել բոլորովին փոխված եյին»։

Պոլետարիատի գիկտառուրայի եպոխայի հնատուղիաստները ցանկանում են տեսնել իրենց ծանոթ «Ցեցակեր» գյուղը, վորի վրա նրանք «սոցարշավ» եյին կազմակերպել առաջին կոլտնտեսության հիմքը դնե-

լու համար։ Ապագայի հնագիտության պրոֆեսորն իր պատմական քարտեզի վրա հազիվ ե գտնում նախկին «Ցեցակեր» գյուղը, վորը գտնվում ե «օլ-ըդ ոսցիալիստական բջիջի շրջանում»։ Տեսնելով այդ կոկիկ քաղաքի տները՝ Հասմիկն ապշած հարց ե տալիս.

«— Սրանք ձեր հանգստյան տներն են։

«— Վոչ, որանք մեր սովորական տներն են, — պատասխանում ե նրան «ապագայի մարդը»։

Հստ եյության Արագին վոչինչ չի «հնարել»։ Նա կարողացել ե միայն դիտել և պատկերացնել գիտության և տեխնիկայի զարգացման հեռանկարները, այն անսպառ հնարավորությունները, վորոնց նախադրյալներն ու սաղմերը արգեն կան մեր որերում— սավառնորդությունը (ավիացիա), ուղիղությունը (տելեվիզիա), ատոմային եներգիան, քամու և արեկի ուժի ոգտագործումը, արհեստական անձրև և այլն։

Տեղ-տեղ հեղինակը ավելի ազատ առաջարեց և տվել իր ֆանտազիային, որինակ յերբ խոսում ե մարդկային ուղեղը քննող «իգրեկ» ճառագայթների մասին, վորոնք կարողանում են հայտարերել մարդու հոգեբանության վորոշ առանձնահատկությունները և այլն։ Նման տեղերում, և առհասարակ պատմվածքի այդ ամբողջ մասում հեղինակը կիրառում ե թեթև կատակի տոնը՝ առանց սակայն դուրս գալու լրջության սահմանից։ Յումորիստական այս նուրբը յերանգին մերթ ընդ մերթ միախառնվում են իսկական բանաստեղծական ավյունով լի նկարագրություններ։ Այդպիսին ե որինակ ապագա Սեվանի լճի շրջակայքի կարագրությունը։

«Եհա մոտեցանք Սևանի լճին, վորն արդեն մի

հրաշալիք եր,—լազուր ջրերը շրջապատված սոճիների
վերառլաց անտառներով, վորոնց խիտ կանաչների
մեջ հոկա ծաղիկների նման փայլում եյին գունավոր
շենքերը՝ Դժվար եր գտնել մի ուրիշ վայր, ուր
բնությունն ու մարդկային արկեստը այլպես ներ-
դաշնակ զուգորդվելին։ Գուրգենը նայում եր հմայված.
Նա սպառեց իր պոեմի մեջ հին բանաստեղծության
վորդշարսենալը, բրտնաթոր յեղավ ու մաց դժգոհ... նա
շարունակ հետ ու առաջ եր շրջում «գեղային»
ածականները՝ «գեղահրաշ» «հրաշագեղ»... «գեղածի-
ծաղ»—«ծիծաղագեղ»... «զարմանահրաշ»—«հրաշագալ-
ման»... ու վերջը չկարողանալով աշտահայտել իր
մեջ հորդացող զգացմունքները, զայրույթով նետեց
մատիտը լճի մեջ...»։

Այստեղ Արագին կիրառում և պրական հետա-
քրքիր մի ձև. նա մեր բառարանի օպվորական բառերը
և բանաստեղծական ձևերը անդոր և գտնում արտա-
հայտելու համար այն գեղեցկությունը, վոր ներկա-
յացնելու յե ապագայի յերկիրը Բանաստեղծական
արսենալի մեր ամենաուժեղ միջոցներն անգամ դրժ-
գույն են ապագա կոմունիստական հասարակության
կյանքը լիռվին պատկերելու համար։

Եատ հետաքրքրական են նաև «թռչող ուսանող-
ների» կազմակերպած դիմավորությունը «հին աշխար»
հի «ներկայացուցիչներին, «բերքի տոնը», վորտեղ
հնչում և ապագայի մարդկանց հղոր մասսայական
յերգը, և վերջապես «արևի ատրուշանը»—արևի եներ-
դիայով շարժման մեջ դրվող «ուժակայանը, վորը
ամեն առավոտ, յերբ արևի առաջին մասագայթները
ընկնում են նրա վրա, հնչում և «Խնոտերնացիոնալը»։

Այսպես խորհանուեռության մոտակա բլուրի
վրա, ցերեկվա հոգնատանջ պայքարից հետո յերկու
ջահել և նատուզիաստները լուսնի շողերի տակ յերա-
զում են ապագայի մասին։ Մակայն նրանց յերազը
ցնորք չե և վոչ ել հիվանդ ուղեղի զառանցանք։
Երանք գիտեն և զգում են, վոր մեր օներկան որե-
ցոր լուծվում և ապագայի մեջ», վոր դա այն ապա-
գան չե, վորի մասին յերազում եյին անցյալի ուսու-
պիստները՝ եքստագի, ինքնամուացության մեջ ըն-
կած։ Նրանք խոսում են ապագայի մասին կեօկա-
տակ, կեօլուրջ տոնով և այստեղ զգացվում ե նրանց։
սոցիալիստական հասարակություն կառուցող այդ
խանդավառների ամբողջ գործնականությունը, ներ-
կայի հաստատումը, ամուր հողի վրա կանգնած լի-
նելը, վորը հնարավորություն և տալիս նրանց նույ-
նիսկ ապագան ծառայեցնելու ներկային, նրա միջո-
ցով լուծելու ներկայի խնդիրները։

Ինչ խոսք, վոր հեղինակն իր վրա վերցրել և
չափազանց դժվար մի խնդիր, վորը վոչ մի կերպ չեր
կարելի լուծել մի քանի տասնյակ եջում, այն ել այն
պիսի մի վիպակում, վորը մեծ մասամբ կառուցված
և միանգամայն «ուեալ» նյութի վրա։ «Ձանտաստիկ
տարրը» մտել և այնտեղ վորպես կառուցվածքային
մի մոմենտ սյուժետային հանգույցը լուծելու համար։
Յեվ պետք ե առել այդ մոմենտը հեղինակի կողմից
ոգտագործված և սրամիտ կերպով։ Պատմվածքի «Փան-
տաստիկական մասի» առանձնահատկությունն այն
է, վոր իրենք՝ պատմվածքի յերկու հերոսներն են
փոխն ի փոխ հորինում այն, իրար պատմելով իրենց
յերեակայական ճանապարհորդությունը, մեկը շա-
րունակելով մյուսի կիրատ թողածը և այդպիսով

լրացնելով ամբողջ պատմությունը։ Սա անկառած որիգինալ պլրյում ե, զորով հեղինակը պատճառաբանում ե «ուսուպիտական տարրը»։

Վիպակը դրալում ե ընթերցողին նաև դիալոգի աշխուժությամբ։ Գլխավոր գործող անձերը, յերկու սիրահարները հաճախ խոսում են նույրը ակնարկներով, զորով նրանց խոսակցությունը դառնում է որամիտ խոռքերի սրախաղություն։

Վիպակում համեմատաբար դժբույն ե դուրս յեկել խորհտնտեսության վարիչ Միքայելի պատկերը։ Ընթերցողի համար պարզ չի պատկերանում այդ հին հեղափոխականի անցյալը։ Թերեւ նա համեստությամբ հրաժարվում ե մանրամասն կանգ տոնել իր անցյալի վրա, թվել այն ծառայությունները, վոր նա մատուառուցել ի հեղափոխությանը։ Սակայն այդ կարող եր անել հեղինակը մի քանի նախաղաղասություններով։ Միքայելի պատմությունն իր անցյալի մասին այնպան ել տիպական և համոզիչ չե։ Նրա նիրկա գործունեյությունը ևս տրված ե վորոշ չափով օխեմատիկ, սակայն պիտի առել—հեղինակին հաջողվել ե դուրս բերել Միքայելին վորպես համակրելի անձնավորություն։ Ոժտերով նրան անձնագոհ հեղափոխականի հատկություններով Արագին կարողացել է ճիշտ կերպով տալ հին և նոր սերնդի փոխարարերությունը։ Հեղինակը չի հակադրել նրանց, ընդհակառակը՝ Միքայելի մեջ մենք տեսնում ենք անհուն սեր և խանդաղատանք դեպի «նորեկները»—սոցիալիզմ կառւցող յերիտասարդ ենտուղիաստները, վորոնք իրենց կողմից խոր մեծարանքով և սիրով են վերաբերվում Միքայելին։ Հատկապես հուզիչ ե վիպակի ֆինալը,

յերբ Միքայելը դիմավորում է յերկու յերիտասարդներին և ուրախությունից արցունքի յերկու կաթիւներ սահում են նրա այտերի վրայով։

V

Յերկրորդ համեմատաբար մեծածավալ գրվածքը, «Ձրվեմի ցոլքում» վիպակը, վոր գրված ե 1933 թ., նույնպես շոշափում ե մի շատ կարևոր պրոբլեմ։ Դա հին մասնագետ—ինժեների հոգեբանության առտիճանական փոփոխման պրոցեսն ե սոցիալիստական նոր կյանքի աղղեցությամբ։ Ինժեներ Թառյանը գեռես պահ պահել ե բուրժուական ինտելիգենտի վորոշ հատկությունները, ինդիվիդուալիզմը, իշխանության սերը։ Նա ամեն ինչին մոտենում ե իր յեսի տեսանկյունից, նա նախանձով ե նայում նրանց, վորոնք բարձրանում են մասսայից և գալիս գրավելու իր տեղը։

Բանվորական կոլեկտիվը զգում ե Թառյանի այդ հակումները, ինքը Թառյանը զգում ե, վոր ինքը դեռևս չի «զտված», վոր անհրաժեշտ ե փոխել ընթացքը, ուրիշ կերպ աշխատել, մերվել կոլեկտիվի հետ, նրա հետ միասին առաջ ընթանալ։ Թառյանի մեջ ոկսվում ե հոգեկան ճգնաժամ։

Այստեղ հեղինակը հանդիս ե բերում մի նոր զործող անձնավորություն—Լիդան՝ Մոռկվայի ժուռնալներից մեկի թղթակիցը։ Լիդան ոժտված ե ուսւկնոջ համակրելի գծերով, նա խորհրդային յերիտասարդության խանդակառ ներկայացուցիչն ե, բացի իր անմիջական պարտականություններից, Լիդան անցնում է ակտիվ աշխատանքի, մոտիկից ծանոթա-

նալով կոմքինատի աշխատանքներին, նկատելով այն թերությունները, վոր անհրաժեշտ է վերացնել, նա չի վախենում քննադատելուց հենց գլխավոր ինժեներ Թառյանին, վորը վորոշ համակրություն և զգում գեղի գեղեցիկ լիդան:

Լիդան ասում է նրան. «Դուք կառուցում եք շենքեր, բայց կարծես մոռանում եք, վոր դրա հետ գուգընթաց պիտի կառուցեք և մարդկանց նոր ոսցիալիստական գիտակցությունը»: Թառյանը լիդայի ըլոկնոտում իր մասին կարդում է. «Ինձեներ Թառյանը... զեռ չի ազատադրվել անցյալի ժառանգությունից... բանվորները նրա համար ազելի «բանուժ» են, քան սոցիալիզմ կառուցողներ... տարված և իշխանության տեսչով, «կառուցողի» փառքով...»:

Պետք ե ասել, վոր հեղինակն այստեղ բավականաչափ չի պարզում խնդիրը: Մենք չենք տեսնում այն համոզիչ շարժառիթները, վորոնք կարող եյին կարճ ժամանակում վերափոխել «իշխանության» և փառքի տեսչով տարված» մի մարդու: Անկառած լիդայի ազդեցությունը կարող եր վորոշ դեր խաղարսակայն վոչ վճռական: Բավարար չափով ցույց տրված չե սոցիալիզմի վերջնական հաղթանակի նշանակությունը հին ինձեների հոգեբանության փոփոխման դրույթ, ինչպես և կոլեկտիվի ազդեցությունը: Զի համոզում նաև Թառյանի այն վարմունքը, վորով նա լքում է իր կնոջը և յերեխային: Այդ ակտը վորևե չափով չի կապակցվում Թառյանի վերափոխման հետ, և ճիշտ ե ասում լիդան վիպակի վերջում, թե Թառյանը դեռևս հին մարդն է, զեռ վերջնականապես չի ազատագրվել անցյալի ժառանգությունից:

Վիպակի թերություններից մեկն ել այն ե, վոր նրանում մենք գործ ունենք միայն հերոսի ներքին աշխարհի, նրա ազգությանը հետո Թառյանի գործողությունների շարժառիթը գլխավորապես հոգեկան ե. այսինչ հարցը պետք եր քննել ազելի լայն հիմքի, ուցիալիզմի համար մղվող պայքարի առորյա պրակտիկայի, սոցիալական և մարդկային հարաբերությունների փոնի վրա: Ծատ բնորոշ են լիդայի խոսքերն այն մասին, թե նա ինչպես ե պատկերացնում հերոսին, հերոսը նրա համար նա յե, ով սոցիալիստական շինարարության բովի մեջ ամբողջ եյությամբ տարվում և գործով և մոռանում և նույնիսկ իրեն՝ լիդային, վորին սիրում ե:

Լիդայի պատկերը հեղինակը նկարել ե հաջող կերպով: Հաջող կերպով են արված նաև վիպակի մի քանի եպ/զոդիկ անձնավորությունները, ինչպես «բրոնզե ինժեները» —խորհրդային, պրոլետարական ինտելիգենցիայի ներկայացուչեցը (ինժեներ Սարյան), նրա ուսանողական ընկեր Աշխենը, վորը հանդիսանում է լիդայի հակադիր տիպը, յերազում և լոկ անձնական կյանքի, հաճույքի մասին, կտրված և լայն հասարակական կյանքից:

Անձնական վրեժից մղված Աշխենը կատարում է մի տգեղ արարք, նա զրապարտում է լիդային Թառյանի կոնց-Սոֆիայի մոտ, ուսկայն ներքուատ ստանում և բարոյական հականարված: Նրա վրեժի զգացումը չի բավարարվում, ընդհակառակը նա տիկին Սոփիայի մոտից դուրս է գալիս ավելի ձնշված և ամոթահար, կարծես նա գնացել եր այստեղ վոչ թե

միշտանչայունելու կամավոր կերպով, այլ հարկադրական հարցաքննության յենթարկվելու:

Արագին հաջող կերպով և տվել նաև տիկին Սոֆիայի պատկերը, վորը ընթերցողի համար վորեն բացառական հատկություն չի ներկայացնում, ևս ավելի տարակույց արթնացնելով վիպակի նման վերջավորության նկատմամբ: Տիկին Սոֆիան Աշխենի ներկայությամբ իրեն պահում և մեծ արժանապատվությամբ, զսպելով ներքին հուզմունքը նա աշխատում և քաղաքավարի ներքել Աշխենի զբարտությունները, թերեւ ներքուստ հավատալով դրանց, այս տեսարանը վիպակի լավագույն հատվածներից մեկն ե:

Անկառած հեղինակի ուշադրությունից վրեակ և մի կարևոր հանգամանք, վոր չեր կարող գերչկատարել կոմիտատի աշխատանքներում նկատված բացերի միջ: Բավական չե միայն նշել բյուրոկրատիզմի, իշխանության տեհնչի, ինքնաքննադատության ձնշման և զանազան մանր ինտրիգների գոյության փաստը, այդ բոլորի հետ միասին չեր կարող չլինել նաև գիտակցական ֆիսարարության մոմենտը, ժողովրդի թշնամիների թագուն սողոսկումը, սոցիալիզմի հաղթական կառուցման առաջ խոշնդուներ հարուցելու ստոր փորձերը: Այս մոմենտի մերկացման բացակայությունը Արագու վիպակի թերություններից մեկն ե, այդ պատճառով ել պատկերը լրիվ չի ստացվում: Ճիշտ և վիպակում մենք տեսնում ենք ինժեներտեխնիկական վորոշ տարրերի դիմադրությունը, նրանց ինտրիգները թառյանի դեմ, սակայն այդ

բոլորը կատարվում ե կարծես միայն «կարյերայի», «աթոռի» համար, անձնական նախանձից դրդված:

Այդպիսի տիպի ինժեներ Վարդանյանը, Բագիկ հին ինժեներներից, մաղձու մի մարդ, վորի միակ ձգտումն և տապալել թառյանին: Նույնպիսի կարյերիստ և ինժեներ Սարգսյանը, «չափած-ձեած շարժումներով մի մարդ... վորը անցյալից բերել իր իր հետ իր հին աշխարհը մի փոքրիկ արկղի մեջ և պահում եր՝ դպուշությամբ, բացելով վոչ բոլորի մոտու Ահա այդ տիպերը, վորոնց Արագին կարողանում ե բնորոշել մի քանի շարիբիներով: անկասկած այդպիսի տիպեր յեղել են և կան խորհրդային ինտելիգենցիայի շարքերում, վորոնք աստիճանաբար զավում և դուրս են շպրավում այնտեղից վորպես խորթ և անհարազատ տարրեր. սակայն թշնամու դիմադրությունը միայն դրանցով չի արտահայտվում:

Չնայած այդ թերություններին Արագու այս վիպակը ուշագրավ յերեսույթ և մեր արձակագրության մեջ և բովանդակում ե նկարագրական մի շարք հաջող եջեր: Բնորոշ հանգամանք և և այն, վոր իր այս յերկրորդ մեծածավալ՝ գրվածքից հետո Արագին անցավ պիես զրելու մտքին, վոր և նա իրագործեց, գրելով «Վոսկե յերազներ» կոմեդիան, վորն արժանացավ մրցանակաբաշխության ժյուրիի հավանության: Պիեսը գեռես տպագրված չե և մենք վաղաժամ ենք համարում խոռել նրա մասին: Կարելի յե նշել միայն այն, վոր պիեսը շոշափում և մեր սոցիալիստական շնորհարարության առորյա ինտիրները սակայն պիեսում հեղինակը ավելի յե կանդ առնում

թշնամական տարբերի գիտակցական վասարարությունը մերկացնելու հարցի վրա:

«Զրվածի ցոլքում» վիպակից հետո Արագին գրեց մի շարք նոր պատմվածքներ, ինչպես «Փայլերի ճամբին», «Կրակը», «Սև կառեար» և այլն:

Հետաքրքրական պատմվածք եւ «Փայլերի ճամբին»-ը, աստեղ վարպետորեն մերկացված երուժուական իրավունքի թեորիան: Կիսով չափ ցնդած Մարկոսյանը (հին փաստաբան) ճգնում եւ մի մեծ աշխատությամբ ապացուցել հոռմեական իրավունքի վրա հիմնված իր տեսությունը, ոգտվելու և չոգտվելու իրավունքի մասին, սակայն գյուղխորհրդի նախագահի առողջ զատողությունը՝ հիմնված սոցիալիստական սեփականության և իրավունքի ապարագ ըմբռնման վրա, ջարդ ու փշուր և անում լատիներեն ցիտատներով խոսող Մարկոսյանի իրավաբանական կառուցութերը: Գյուղխորհրդի նախագահը հարցը շշմեցուցիչ կերպով պարզ եւ գնում, նա գրողի ծոցն և ուղարկում «չոգտվելու իրավունքը» և այլ «հոռմեայական առըիբուտները». Յեթե Մարկոսյանը չի ուղում ոգտագործել իր ամառանցը վորպես բնակարան, ապա գուշը կոդագործի այն վորպես դպրոց:

Յերբ Մարկոսյանը հեռանում է, նախագահի սենյակում բռնկվում եւ մի մեծ ծիծաղ. «—Են զ՞նց եր ասում—չոգտվելու իրավունք... համ, համ, այ թե աղվակատ ա ե...»:

Նախկին փաստաբան Մարկոսյանը հավատում է մասնավոր սեփականության շանխախտ որենքին: Նա ունի մի տուն գյուղում, վորը տարվա մեծ մասը չի ոգտագործում: Դա յեղել է նախկին հարուստի պա-

մառանոցը: Գյուղխորհուրդն առաջարկում է Մարկոսյանին մշտական կերպով ապրել այդ տանը, հակառակ գեղքում տունը կգրավի գյուղի կողմից և կողտագործվի, վորպես պարոց: Հեղինակը չի առում թե գեղքը յերբ և կատարվել: Անկառած պետք է յենթաղբեր, վոր խոսքը վերաբերում է խորհրդայնացման առաջին տարիներին:

Արագին իր պատմվածքը հիմնականում կառուցել է կոմիկական-յումորիստական պլանով, ուստի և համոզիչ չեն այն տեղերը, ուր մանում են լուրջ ուսական պատմվածքի մոմենտներ: Որինակ համոզիչ չե Մարկոսյանի և իր զինվորական վորդու փոխհարաբերության պատկերումը:

Գետք և ասել, վոր Արագին կարողացել է հաջող կերպով տալ բուրժուական իրավունքի մերկացումը: Սակայն պատմվածքի վերջավորությունը ստացվել եւ մի փոքր ավելի տրագիկական, վորը վորոշ չափով խախում և պատմվածքի յումորիստական բնույթը: Վողբերգական վերջավորությունը չի ներդաշնակվում պատմվածքի ընդհանուր իդեալի հետ: Մարկոսյանի տիպը դուրս է յեղել մի փոքր «գրոտեսկային», չափանցված գծերով: Դա մի իոկական «անախրոնիզմ ե» մեր որերում, մի տեսակ հնադարյան «իմտիոգավը»—բուրժուական սեփականության պաշտպանի դերում: Իզուր չե, վոր Արագին Մարկոսյանին հանդես ե բերել վորպես մի կիսախելագար տիպ, մենամոլ, վորը ունի իդեֆիկս և չի կարող աղատվել դրանից: Նրա տրագիկական վախճանը միայն լուծում է խնդիրը: Այս տեսակետից վորոշ չափով կարելի յերդարացնել հեղինակի ձգտումը Մարկոսյանին պատկերդարացնել հեղինակի ձգտումը:

բելու շարժի, գրոտեսկի մոմենտներով, վորակն բացառիկ մի տիպար մեր որերում, հազվագյուտ մի եկղեմպլար:

Վերջին շրջանում Արագին ոկտել ե գրել պատմը վածքներ հեղափոխական անցյալից, այդ պատմը վածքներում յերբեմն կարծես կարելի յե տեսնել ինքնակենագրական վորոշ մոմենտներ: Յեզ պետք ե ասել, վոր Արագու անցյալը հնարավորություն ե տալիս նրան առատ նյութ ստանալու տյդ կարգի պատմվածքների համար: Այդ հետաքրքիր պատմվածքները լույսեն տեսել «Ակունքներ» վերնագրով մի առանձին գրքում: Այսեղ պետք ե նշել միայն վոր պատմվածքների այդ ժանրը, վորի մի նմուշին ծանոթ ե ընթերցողը («Կարմիր հարսնացուն» տես՝ Յերկերի ժող. հ, 1) միանգամայն բեղմնավոր ե և այժմհական: Արագին մեծ ծառայություն կմատուցի մեր գրականությանը հետագայում եռ տալով հեղափոխական անցյալի պատկերները:

Մենք հնարավորություն չունենք մի առ մի կանգ առնելու Արագու մի շարք այլ պատմվածքների վրա, դրանց մեջ կան խիստ ուշադրավ և հետաքրքիր պատմվածքներ, վորոնք տալիս են կյանքի ցայտուն և բնորոշ պատկերներ: Արագու պատմվածքների նոր շարքը անկասկած ընթերցողի համար պետք ե ներկայացնի նոր հետաքրքրքը ընթերցություն: Այդ պատմվածքներում հեղինակը անպանույն, պարզ լեզվով պատմում ե յերիտառարդ ուսանողի մուտքը հեղափոխական գործունեյության առարկեղը, նրա առաջին դժվարությունները, վտանգի

յենթարկվելու ռպառնալիքը, հեղափոխական փորձի աւտիճանական գրավումը: Այդ բոլոր պատմվածքների մեջ Արագին մնում ե հավատարիմ ուսալիստական ուղղությանը՝ նա հանդես ե գալիս վորպես ոոցիալիստական ուսալիքմի մեթոդի կիրառողներից մեկը խորհրդային հայ արձակագրության մեջ:

Արագու ստեղծագործության հիմնական առանձնահատկությունն այն ե, վոր նա հենց սկզբից, իր գրական գործունեյության առաջին քայլերից սկսած անցնում ե պայքարող պրոլետարիատի պլատֆորմի վրա, վորպես հիմնական թեմա վերցնում ե հեղափոխությունը: Նրա բոլոր յերկերում կարմիր թերով անցնում ե բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության շահերի պաշտպանության գաղափարը, սոցիալիզմի վերջնական հաղթանակի նկատմամբ ունեցած խոր հավատը:

Միանգամայն խորթ լինելով ազգային սահմանափակության տեսնդենցներին, բուրժուական նացիոնալիստների քարոզած ազգայնական տեսություններին, Արագին տոգորված ե պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարով, վոր նա վառ կերպով մարմնացրել ե «Կարմիր համբույր» պատմվածքում: Հին պրոլետարական գրողը հեղափոխությունից հետո ևս անվերապահորեն իր գրիչը նվիրեց Լենինի-Ստալինի կուսակցության գաղափարների պրոպագանին, գեղարվեստական պատկերների միջոցով վեր հանելով այն համաշխարհային-պատմական նվաճումները, վոր ձեռք ե բերել բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը կոմունիստական կուսակցության դեկավարությամբ:

Ինչպես տեսանք, Արագին կարողացել ու իր մի շարք պատմվածքներում ցայտուն պատկերների միջոցով դբթվորել և սոցիալական այն խոր հեղաշրջումը, վոր կատարել և սոցիալիստական մեծ հեղափոխությունը մասսաների սեջ։ Մենք տեսանք, թե ինչպես ճնշված, ընչաղուրկ և տանջված մարդը, պրոլետարը և աշխատավոր գյուղացին բարձրանում և պատմության մեջ չտեսնված դիրքի վրա, առաջին անգամը պատմության մեջ ձեռք և բերում մարդկային իրավունքներ, վորոնք այժմ վերջնականորեն և առհավետ արձանագրված են Ստալինյան Սահմանադրության մեջ։ «Աչքը վախեցած» Հանեսների, Մուկուչների, Բենոների («Հազար գլխանի») և նման այլ պարզ մարդկանց փոխակերպումը և վերածումը մարդկային արժանապատվությամբ լի իսկական հերոսների—ահա այն խորիմաստ և վիթխարի պրոցեսը, վոր տեղի յեւ ունեցել սոցիալիզմի յերկրում անցած քանյարկուտարիների ընթացքում։ Ենք անհրաժեշտ և նշել, վոր Արագին կարողացել և աղնչանավոր թեման իր ժամանակին, սկսած Անդրկովկասի խորհրդանացման առաջին տարիներից, մշակել և տալ այնպիսի պատկերներ, վորոնք խորը տպավորվում են, մնում ընթերցողի հիշողության մեջ։

Այժմ, յերբ Ստալինյան սահմանադրության հիման վրա ընտրված Գերագույն Խորհրդի դեպուտատների թվում են ժողովրդի ծոցից յելած մարդիկ, սոցիալիստական հայրենիքի անվանի զավակները, յերբ այդ դեպուտատների թվում և և ինչքը խորհրդագյին ավագ գրող Արագին, վորը իրեն ավագագույն դեպուտատ բաց արեց Հայկական ԽՍՀ Գերագույն

Խորհրդի առաջին սեսսիան, մենք չենք կարող մտովի չիշել նրա պատմվածքների հերոսներին՝ այդ Մուկուչներին, Հանեսներին, Բենոներին, վորոնց անցած կյանքի ուղին շատ բանով նման և մեր հայրենիքի մյուս զավակների, ժողովրդական հոծ զանգվածներից դուրս յեկած մարդկանց կյանքի պատմությանը։

Սոցիալիստական մեծ հեղափոխությունն եր, վոր կատարեց այդ «հրաշքը», մասսաներին բարձրացրեց ունեվոր և կուլտուրական կյանքի մակարդակին, ժողովրդի մարդկանց տվեց իսկական իրավունքներ, դեմոկրատական լայն ազատություններ և կուլտուրական անսահման վերելքի հնարավորություն։

Գեղարվեստական գրականության մեջ այս նըշանակալից յերեսույթի պատկերման յերախտիքը մեծ չափով պատկանում է նաև Արագուն, ճիշտ ե, Արագին տալիս և գլխավորապես այդ պրոցեսի սկզբնական շրջանը, սակայն «Լուսնի շողերով» վիպակում տրդեն նա յերեակայության թևերով թռչում ե գեղի ապագա կոմունիստական հասարակությունը, վորաեղ արդեն լիովին ավարտված և այդ պրոցեսը, վորտեղ տիրում ե տիեզերական ներդաշնակություն մարդկային հասարակության մեջ։

Մինչ այդ, սակայն, Արագին չի մոռանում, վոր գեռնս չի վերջացել պայքարը, քանի դեռ մեզ Մշակատում են կապիտալիստական յերկրները, քանի դեռ թշնամին սրում և իր գաղանային ատամները, փորձելով դուրս գալ մեր Մեծ Միության անառիկ ամրոցի դեմ։

Արագին այժմ չնայած իր արդեն պատկառելի տարիքին ապրում և իր ստեղծագործության նոր

վերելքի և ծաղկման շըջանը. յերիտասարդական ավ-
յունով նս աշխատում ե, յեռանդով մասնակցում
գրական-հասարակական կյանքին, հանդիս դալով վոր-
պես Խորհրդային Հայաստանի գրականության առա-
ջավոր ներկայացուցիչներից մեկը, վորին ճանաչում
և սիրում են խորհրդային ընթերցողները։ Արագին
խորհրդային Կառավարության—ԽՍՀՄ Գերագույն Խոր-
հրդի Նախագահության կողմից պարզեատրված և
«Պատվո նշան» զբանշանով։ Վորպես Հայաստանի Խոր-
հրդային Գրողների միության պրեզիդիումի անդամ
նա կատարում ե ղեկավար աշխատանք և իր խոր-
հուրդներով ոգնում և գործին։

Հասարակական աշխատանքը չի խանդարում Ա-
րագուն՝ առաջվա թափով շարունակելուիր գրական աշ-
խատանքները։ Այժմ նա զբաղված ե իր նոր վեպով,
վորը կրում ե «Այրվող հորիզոնը» վերնագիրը։ Այդ
վեպի մի քանի հատվածները տպագրվեցին «Խորհր-
դային գրականություն» հանդեսում։

Արագին պատկանում ե այն գրողների թվին,
վորոնք կարող են խոսել լայն զանդվածների հետ
պարզ և մատչելի լեզվով, առանց ֆորմալիստական
տրյուկների և պաճուճանքների։ Նա դաստիարակվել է
անցյալի գրականության վարպետների, մեծ ուշ-
լիստների յերկերով։ Նա ունի գրական լուրջ կուլ-
տուրա, խստապահանջ և դեպի գրական ստեղծագոր-
ծությունը, զգում ե այն մեծ պատասխանավու-
թյունը, վոր դնում ե սոցիալիստական հայրենիքը
յուրաքանչյուր իսկական խորհրդային գրադի վրա։

Այս ամենն անխախտ գրավական ե, վոր Արա-
գին, զինված սոցիալիստական ուստիզմի մեթոդով,

հետապայում ևս խորհրդային ընթերցողին կտա ու-
շագրավ և արժեքավոր յերկեր, պատկերելով սոցիա-
լիզմի մեծ դարաշրջանը, Լենինի-Ստալինի կուսակ-
ցության գաղափարներով վոգեշնչված խորհրդային
յերջանիք ժողովրդի կյանքն ու պայքարը, վեր հա-
նելով սոցիալիզմի կառուցման, սոցիալիստական հայ-
րենիքի պաշտպանության հերոսական մարտիկների,
խորհրդային քաղաքի և գյուղի մարդկանց ճշմար-
տացի և հոյակապ պատկերը։

Ահա այն պատվավոր խնդիրը, վորի իրագործ-
մանը պետք ե նվիրվի յուրաքանչյուր խորհրդային
գրող, կատարելով իր նվիրական պարտքը Սոցիա-
լիստական մեծ հայրենիքի հանդեպ։

Պատ. լսմբագիր՝ Հը, Մարգարյան
Տեէս, լսմբագիր՝ Ստ, Ալբունյան
Սրբագրիչ՝ Մ, Մարտիկյան

Գլավմիտի լիազոր՝ Զ—1064 Հըատ
№ 5076. Պատվեր 485. Տիրաժ՝
3000. Թուղթ 94×105 Տպագր.
և մամ. Հանձնված և արտադրու-
թյան 22 նոյեմբերի 1989 թ.
Ատորագրված և տպագրության
համար 3 հունվարի 1940 թ.
Հայոցհանրատի 1 առ. Յերևան,
Լենինի, 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0377139

66-783

27504